



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՓՅՈՒՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵՂԱԿԱՐԿ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ
ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ



DFID

Department for
International
Development



© Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2012

Առաջին հրատարակություն, 2010

Երկրորդ հրատարակություն՝ վերամշակված, 2012

Աշխատանքի միջազգային կազմակերպության հրատարակությունների հեղինակային հրավունքները պաշտպանված են Հեղինակային իրավունքի մասին համաշխարհային կոնվենցիայի Արձանագրություն թիվ 2-ի համաձայն: Այդուհանդերձ, դրանք հատվածաբար կարող են վերարտադրվել առանց թույլտվության, եթե նշվում է աղբյուրը: Վերահրատարակման կամ թարգմանության իրավունք ստանալու համար անհրաժեշտ է դիմումը ներկայացվել ԱՄԿ-ի հրատարակությունների բաժին հետևյալ հասցեով՝ International Labour Office, CH-1211 Geneva 22, Switzerland, կամ էլեկտրոնային փոստով՝ pubdroit@ilo.org:

Վերահրատարակման իրավունքների կազմակերպություններում գրանցված գրադարանները, հաստատությունները և այլ օգտագործողները կարող են վերահրատարակել նյութը այդ նպատակով իրենց տրամադրված արտոնագրի համաձայն: Այցելեք www.ifrro.org վեբ կայքը ձեր երկրում վերահրատարակման իրավունք ունեցող կազմակերպությունների մասին տեղեկատվություն ստանալու համար:

Զեռնարկ այլ պետություններում բնակվող հայերի համար

ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթարածաշրջանային գրասենյակ,
2012

ISBN

(print); ISBN

(WEB PDF)

Նույնպես տպագրված է անգլերենով և ռուսերենով:

Handbook for Armenians Abroad

ISBN

(print),

(WEB PDF)

Գրքի մատենագիտական նկարագիրը

ԱՄԿ-ի հրապարակումներում տեղ գտած հասկացությունները, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի գործելակերպին, և դրանցում ներկայացված նյութը չեն կարող ընկալվել որպես Աշխատանքի միջազգային կազմակերպության կարծիք՝ որևէ երկրի, տարածքի կամ տարածաշրջանի, կամ դրանց հշիկանությունների իրավական կարգավիճակի, կամ արտաքին սահմանների վերաբերյալ:

Յոդվածներում, ուսումնասիրություններում և այլ հրապարակումներում արտահայտված կարծիքների համար պատասխանատվություն են կրում միայն հեղինակները, և տպագրության փաստը չի ենթադրում, որ Աշխատանքի միջազգային գրասենյակը համամիտ է արտահայտված կարծիքների հետ:

Զեռնարկությունների, առևտրային ապրանքների, գործընթացների անվանումների հիշատակումը չի ենթադրում դրանց հավանության չափանակներու մասին:

Այցելեք մեր վեբ կայքը՝ www.ilo.org/pblns

Տպագրված է Հայաստանում

Երախտիքի խոսք

Սույն ձեռնարկը 2010թ. մշակվել է ԱՄԿ/ԵՄ «Կայուն համագործակցություն՝ Ռուսաստանի Դաշնությունում, Կովկասում և Միջին Ասիայում աշխատանքի միգրացիայի արդյունավետ կառավարման համար» ծրագրի շրջանակներում՝ ԱՄԿ/ՄՁՆ-Մեծ Բրիտանիայի կողմից ֆինանսավորվող «Աշխատանքային միգրացիայի քաղաքականությանը և պրակտիկային ուղղված արդյունավետ գործողություններ» ծրագրի աջակցությանբ: Այնուհետ 2011թ. վերամշակվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ «Միգրանտ աշխատողների պաշտպանությունը Ռուսաստանի Դաշնությունում և միգրացիայի դրական ազդեցության ընդլայնումը Հարավային Կովկասում» ԱՄԿ ծրագրի շրջանակներում:

Զեռնարկի առաջին հրատարակությունը պատրաստվել է իրավաբանական գիտությունների թեկնածու Գեորգի Կուտոյանի կողմից: Երկրորդ հրատարակությունը (փոփոխություններով և լրացումներով) վերամշակել է իրավաբանական գիտությունների թեկնածու Արտյոմ Սեղրակյանը՝ Գեորգի Կուտոյանի և Լուսինե Գալաջյանի, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, անմիջական մասնակցությամբ:

Վերամշակված ձեռնարկը լրացվել է Հայաստանի գործարար միջավայրին վերաբերող նոր բաժնով և փոփոխվել է 2012թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված իրավական ակտերի հիման վրա՝ աջակիցների և շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության օգտագործմանը: Զեռնարկում արտահայտված կարծիքները կարող են չարտահայտել ԱՄԿ, ԵՄ կամ ՄՁՆ պաշտոնական տեսակետները:

Զեռնարկում տեղ գտած տեղեկությունների և համապատասխան իրավական ակտերի կամ այլ պաշտոնական փաստաթղթերի միջև ամհամապատասխանությունների կամ հակասությունների առկայության դեպքում՝ գերակայում են իրավական փաստաթղթերը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հարգարժան ընթերցող,

Ձեր ձեռքին է «Այլ պետություններում բնակվող հայերի համար» ծեռնարկի վերամշակված տարրերակը:

Գիրքը վերանայելու, խմբագրելու անհրաժեշտությունը առաջացել է 2010-2011 թթ. ընդունված մոր ՀՀ օրենքների, կառավարության որոշումների, նրանցում կատարված փոփոխությունների հետևանքով։

Սենք որոշում ընդունեցինք հրատապ վերանայել գիրքը, որում կընդգրկվեն ՀՀ օրենսդրության վերջին փոփոխությունները և համապատասխանաբար կներկայացվեն Ձեր դատին։

Գրքում թարմացված նյութերը վերաբերում են տնտեսական, սոցիալական օրենսդրությանը, ինչպես նաև մարդկանց մուտքի, ելքի, երկրադարձության, կացության կարգավիճակներին և այլն։

21-րդ դարում հայկական պետականության և աշխարհասփյուռ հայության առջև ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերները պահանջում են ավելի մեծ ուշադրություն դարձնել Հայաստան-Ավիյուոք գործակցությանը, որա զարգացման միտումներին։

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության նպատակն է զարգացնել Հայաստան-Ավիյուոք հարաբերությունները, գտնել ծներ դրանց սերտացման և ամրապնդման համար, աջակցել հայապահպանության հիմնախնդիրների լուծմանը և մշակել ծրագրեր, որոնք կիրանեն աշխարհասփյուռ հայերի հայրենադարձությունը, քայլեր ձեռնարկել այլալեզու և այլակրոն հայերի շրջանում արթնացնելու և արմատավորելու հայկական ազգային ինքնության զգացումը։ Այս նպատակների հրականացմանը, որպես կարևոր կառուցակարգ, կարող է ծառայել մեր մտահաղացմամբ ստեղծված այս ձեռնարկը, որը կծառայի որպես տեղեկատու-ուղեցույց այլ պետություններում բնակվող ՀՀ քաղաքացիների ու ազգությանը հայ օտարերկրացիների համար։

Սույն ձեռնարկը փորձ է անում ՀՀ օրենսդրությունից ընտրել և վերլուծել այն իրավական ակտերը, ծրագրերը, որոնք պարունակում են օգտակար տեղեկություններ Հայաստանի Հանրապետության, Հայաստան-Ավիյուոք գործակցության, ազգությամբ հայերի համար Հայաստանում գործող վերադարձի և վերահսկության ծրագրերի, Հայաստանի Հանրապետությունում ազգությամբ հայ օտարերկրացիների ու այլ պետություններում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավական կարգավիճակի վերաբերյալ։

Զեռնարկում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, ՀՀ տարածքում գտնվելու և բնակվելու, ՀՀ տարածքից դուրս գալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռք բերման և Հայաստանի Հանրապետությունում ՀՀ քաղաքացիների զինվորական ծառայություն անցնելու կարգը։

Օգտվելով ձեռնարկից՝ ընթերցողը նաև տեղեկություններ կստանա Հայաստանի Հանրապետությունում կրթական, մշակութային, աշխատանքային, գույքային ու սոցիալական իրավունքների մասին։

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեություն ժավալել ցանկացողներն այդտեղ կգտնեն իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, կունենան հստակ տեղեկություններ օտարերկրյա ներդրումներ կատարելու վերաբերյալ։

Հուսով եմ, որ սույն ձեռնարկը կծառայի իր նպատակին, կօգնի օտար պետություններում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և ազգությամբ հայ օտարերկրացիներին անհրաժեշտ տեղեկատվություն ունենալ ՀՀ օրենսդրության մասին, լինել տեղեկացված, ստանալ պատասխաններ հաճախ առաջացող հարցերի վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում դիմել պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնին և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանը։

Սիրելի ընթերցող, բոլոր դեպքերում, դժվարությունների հանդիպելու, չլուծված խմբիրներ ունենալու, խորհրդի, տեղեկատվության և օժանդակության կարիքի դեպքում ՀՀ սփյուռքի նախարարության դրները միշտ բաց են ձեր առջև, յուրաքանչյուր աշխատող պատրաստ է օգտակար լինել ձեզ։

Մենք սիրով սպասում ենք ձեզ...

ՀՀ սփյուռքի նախարար
Յրանուշ Հակոբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
ԲԱԺԻՆ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
ԲԱԺԻՆ 2 ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓյուռք ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	10
ԲԱԺԻՆ 3 ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂ ՎԵՐԱՊԱՐՁԻ, ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	13
ԲԱԺԻՆ 4 ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՕԾԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	18
Ա. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	19
Բ. ՕԾԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ, ԱՅՆ ԹՎՈՒՄ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՕԾԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ, ԻՐԱՎՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	20
Գ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	21
ԲԱԺԻՆ 5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆԸ	23
Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՈՒՄԸ	24
Բ. ԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ	24
Գ. ԵՐԿՐՈՂԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	26
Դ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	27
ԲԱԺԻՆ 6 ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	29
Ա. ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	30
Բ. ԱՅԼԸՆՏՐԱՆՆԵՐՅԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	34
Գ. ՍԱՐՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՍԻ ՊԱՐՏԱԴՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՏԱԾ	
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ	34
Դ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	37
ԲԱԺԻՆ 7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼԸ ԵՎ ԲՆԱԿՎԵԼԸ, ԵԼՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ	39
Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ	40
Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ	42
Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԻ ԿԱՐԳԸ	44
Դ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	44
ԲԱԺԻՆ 8 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	46
Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	47
Բ. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԸ	47
Գ. ՍԱՍԱՎԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	49
Դ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	52
ԲԱԺԻՆ 9 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	54
Ա. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	55
Բ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ	55
Գ. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՅԱՐԺԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱԳՅԱՆԱԳՐԵՐԸ	56
ԲԱԺԻՆ 10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	57
Ա. ԿԵՆՍԱԹՈՇԱԿ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ	58
Բ. ԱՌՈՋՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՍՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ	59
Գ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	60
ԲԱԺԻՆ 11 ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	61
Ա. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐ	62
Բ. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԾՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹԵՐԵՐԻ ՔԵՍԱՐԿՈՒՄԸ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	62
Գ. ՍԱՔՄԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ	63
Դ. ՀԱՅԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	63
ԲԱԺԻՆ 12 ՕԾԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ	64
Ա. ՕԾԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	65

Բ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՎ ԶԵՇՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ	66
Գ. ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊՈՏԵՏԻՑԻԱԼ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ	68
ԲԱԺԻՆ 13 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱԲ ԶԲԱՂՎԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ	70
Ա. ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	71
Բ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱՑԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	74
Գ. ՀԱԲԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ	75
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	76
ՀԱՎԵԼՎԱԾ 1 Տոներ և հիշատակի օրեր	78
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ	79
ՀԱՎԵԼՎԱԾ 3 Հարցաթերթիկ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար	93
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՀՀ քաղաքացիություն ստացող անձանց համար ՀՀ սահմանադրության և հայոց լեզվի իմացության ստուգում	95
ՀԱՎԵԼՎԱԾ 5 ՀՀ քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին ՀՀ կառավարությանը հայտնելու կարգ	99
ՀԱՎԵԼՎԱԾ 6 ՀՀ մուտքի արտոնագիր տալու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը	101
ՀԱՎԵԼՎԱԾ 7 Դիմում-հարցաթերթիկ ՀՀ կացության կարգավիճակ ստանալու (երկարաձգելու) սկզբանական փուլ	102
ՀԱՎԵԼՎԱԾ 8 Կացության կարգավիճակ տալու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը	103
ՀԱՎԵԼՎԱԾ 9 Այլ պետություններում բնակվող ՀՀ քաղաքացիների, երկրադարձացիների և օտարերկրացիների համար օգտակար օրենքների ցանկ*	104

ՆԱԽԱԲԱՆ

Զեռնարկի նպատակն է գիտելիքներ ու տեղեկատվություն ապահովել այլ պետություններուն բնակվող հայերի համար, որը հնարավորություն կտա նրանց մասնակցել ու ներդրում ունենալ Հայրենիքի զարգացման գործընթացներում, ինչպես նաև աջակցել Հայրենիքի հետ կապի պահպանմանը: Այլ պետություններուն բնակվող հայերը կարող են դասակարգվել երեք խմբի. արտասահմանում աշխատող հայեր (միգրանտ աշխատողներն ու իրենց ընտանիքի անդամները), սկյուռքահայեր (հայկական ծագումով օտարերկրացիները) և երկրադարձի հայեր (օտարերկրյա այն քաղաքացիները, ովքեր ունեն նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն):

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանից արտագաղթը կտրուկ նվազել է 1992-1994թ. համեմատ, այն դեռ բավկանին բարձր է: Համաձայն ԵԱՀԿ ու Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ կազմակերպության անցկացրած ուսումնասիրության («2002-2008 Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն»), Հայաստանի միգրանտների թիվը 2002-2007թ. կազմել է 230 հազար 1991-1998թ. 760 հազարի համեմատ: Միգրանտների 90 տոկոսը աշխատանքային միգրանտներ են կամ այլ երկրներում ապրող Հայաստանի քաղաքացիներ: Աշխատանքային միգրանտների մեծամասնությունն աշխատում է Ռուսաստանում:

Հայերի ընդհանուր քանակն ամբողջ աշխարհում կազմում է մոտավորապես 10 միլիոն, որից ավելի քան 7 միլիոնը բնակվում է Սփյուռքում, շուրջ 3 միլիոնը՝ Հայաստանում: Սփյուռքն ու իր կազմակերպությունները կարևոր գործոն են Հայաստանի զարգացման ու միգրացիայի շարժմանցի համար: Ե՛վ հայկական Սփյուռքը, և Հայաստանի իշխանությունները գիտակցում են, որ Սփյուռքի ու Հայաստանի հայության միջև փոխգործակցությունը կարող է անգնահատելի դրական ազդեցություն ունենալ Հայաստանի զարգացման համար:

2008թ. հոկտեմբերի 1-ից Հայաստանի կառավարության կազմում գործում է ՀՀ սփյուռքի նախարարությունը: Դրա կարևորությունը Սփյուռքի հետ ակտիվիրեն համագործակցելու համատեքստում ակնհայտ է: Ստեղծման օրվանից նախարարությունը նշակել և իրականացրել է քազմաթիվ նոր ծրագրեր՝ ուղղված Հայաստան-Սփյուռք գործակցությանը:

Սփյուռքը տարաբնույթ ռեսուրսների՝ հնտությունների, գիտելիքների, ծանոթությունների, գաղափարների և անսպառ ներուժի շտեմարան է: Գիտակցաքարտ շարունակելով սերտացնել կապերը Սփյուռքի հետ՝ կարևորվում է մի ձեռնարկի (ծանոթագրություն-ուղեցույցի) ստեղծումը և անընդմեջ դրա կատարելագործումը, որը կարող է օգտակար լինել այլ պետություններուն բնակվող հայերի համար՝ Հայրենիքի մասին ավելին իմանալու և Հայրենիքի հետ շփումներն ամրապնդելու գործում:

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 1)

Պաշտոնական անվանումը՝
Մայրաքաղաքը՝
Բնակչությունը՝
Հայերի թիվն աշխարհում՝
Տարածքը՝
Վարչատարածքային բաժանումը՝
Անկախության հօչքակումը՝
Կրոնը՝
Լեզուն՝
Ազգային արժույթը՝

Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)
Երևան
3,2 միլիոն
շուրջ 10 միլիոն
29 800 քառակուսի կիլոմետր
10 մարզ և Երևան քաղաք
21 սեպտեմբերի 1991թ.
Քրիստոնեություն
հայերեն
հայկական դրամ (ՀՀԴ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԸ

Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ վերևից ներքև կարմիր, կապուտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, իսկ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապուտը գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարելու տաղանդը և աշխատասիրությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱԽԱՆՑՈՒՅԹ



Հայաստանի Հանրապետության գինանշանն է. կենտրոնում՝ վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ նոյյան տապանով և պատճական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերևից ձախ՝ Բագրատունիների, վերևից աջ՝ Արշակունիների, ներքևից ձախ՝ Արտաշիսյանների, ներքևից աջ՝ Ռուբինյանների գինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ծապավեն: Զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատճական

Հայաստանի թագավորություններինը՝ վերևից ձախ՝ կարմիր, վերևից աջ՝ կապուտ, ներքևից ձախ՝ կարմիր, և կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Հայաստանի Հանրապետության գինանշանի գույնները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՅՆԵՐԳԸ

(Խոսքերը՝ Միքայել Նալբանդյանի, Երաժշտությունը՝ Բարսեղ Կանայյանի)

Մեր Հայենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեղար,
Իր որոիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:
Ահա եղբայր, քեզ մի դրոշ,
Զոր իմ ծեռօռվ գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուրով լվացի:
Նայիր նրան՝ երեք գույնով
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:
Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆԻ ԹՅՈՒՆԸ

ՀՀ պետականության հիմքերը սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, որն ընդունվել է համաժողովողական քվեարկությամբ (հանրաքենով) 1995թ. հուլիսի 5-ին: 2005թ. նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքենով ընդունվեցին սահմանադրության փոփոխությունները, որով պետականությունը դրվեց առավել անուր հիմքերի վրա:

ՀՀ-ում պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիմնա վրա:

ՀՀ Նախագահը պետության գլուխն է, ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության ու անվտանգության երաշխավորը: Նա ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (խորհրդարան), որն ընտրվում է ՀՀ քաղաքացիների կողմից՝ 5 տարի ժամկետով: Այն ունի միապալատ կառուցվածք և բաղկացած է 131 պատգամավորներից:

Գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը, որը բաղկացած է վարչապետից և նախարարներից: Վարչապետին նշանակում է ՀՀ Նախագահը՝ Ազգային ժողովում պատգամավորական խնճակցությունների հետ խորհրդակցությունների հիմնա վրա: Նախարարները նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ:

Դատական իշխանությունն իրականացնում է Նախարարները: Նրանք միակ մարմիններն են, որոնք կարող են իրականացնել արդարադատություն: Արդարադատության հարցերով բարձրագույն դատական ատյանը վճռաբեկ դատարանն է: Հայաստանում գործում է նաև Սահմանադրական դատարան, որը հանդիսանում է սահմանադրական արդարադատության հարցերով բարձրագույն ատյանը: Սահմանադրական դատարանը բաղկացած է 9 անդամից, որոնք նշանակվում են ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում, սկսած 1998թ., արձանագրվել է կայուն տնտեսական աճ: 2008թ. գրանցվել է ՀՆԱ-ի աճ 6,9%-ի չափով: 10 տարիների շարունակական բարձր աճի դիմաց 2009թ. առաջին անգամ Հայաստանում գրանցվեց տնտեսական անկում (14.2%)՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատեսական ճգնաժամով: Սակայն 2010թ. սկզբից նկատվեց տնտեսական վերականգնում և առաջին կիսամյակի տվյալներով գրանցվեց 6.2% տնտեսական աճ: Նույնը պահպանվեց նաև 2011թ.:

Տնտեսական արագ վերականգնումը և շարունակական աճը մեծապես պայմանավորված է ներքին սպառման, ծառայությունների ու շինարարության զարգացմամբ, միգրանտներից ստացած դրամական փոխանցումների շնորհիվ: Հայաստանն առանձնանում է օտարերկրյա ներդրումների համար մի շարք բարենպաստ գործուներով, ինչպիսիք են՝ կրթված և ցածր վարձատրվող աշխատուժը, որակյալ մարդկային ռեսուրսները, տեղեկացվածությունը բարձրագույն տեխնոլոգիաներինը:

2011թ. Հայաստանն ընդգրկվել է տնտեսական ազատության բարձր մակարդակ ցուցաբերող երկրների ցանկում: Այն առաջ է անցել Ֆրանսիայից և գրադեցրել է 36-րդ տեղը՝ ըստ «Ուոլ Սթրիթ Ջորնալ» օրաթերթի (The Wall Street Journal) և «Քերիթիք» հիմնադրամի (The Heritage Foundation) տարեկան ուսումնասիրության արդյունքների:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

ՀՀ բանակն այսօր տարածաշրջանի ամենամարտունակ բանակներից մեկն է: Այն երկրի ռազմական անվտանգության հիմնական երաշխիքն է: Դա ամրագրված է ինչպես Ազգային անվտանգության ռազմավարության մեջ, այնպես էլ Ռազմական դոկտրինում:

Պետության պաշտպանությանը մասնակցելը ՀՀ-ում համարվում է սահմանադրական պարտականություն, իսկ զինվորական ծառայությունը պարտադիր է յուրաքանչյուր քաղաքացու համար (տես Բաժին 6):

Բանակն ապահովում է հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը:

Քաղաքական հարցերում այն պահպանում է չեզոքություն և գտնվում է քաղաքացիական (ժողովրդավարական) վերահսկողության ներքո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայաստանի բնակչությունը կազմում է 3.210.000 մարդ (2001թ. մարդահամարի արդյունքներով, 3.260.000 մարդ՝ 2010թ. տարեկան դրությամբ): Հայերը կազմում են ազգաբնակչության 96 տոկոսը: Ազգային փոքրամասնություններն են՝ ռուսները, եղիները, քրդերը,

ասորիները, հույները, ուկրաինացիները, հրեաները, լեհերը և այլն:

Հայերի բացարձակ մեծամասնությունն առաքելական քրիստոնյաներ են (301 թվականից): Հայաստանում Եկեղեցին անջատ է պետությունից, երաշխավորվում է կրոնական բոլոր կազմակերպությունների գործունեության ազատությունը: ՀՀ Սահմանադրությամբ պետությունը ճանաչում է Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես ազգային Եկեղեցի և կարևորում է նրա բացարձիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Եկեղեցու դերը պատմականորեն մեծ է եղել հայերի համախմբման և Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդման գործում, այն մեծ է նաև այսօր:

ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀՆԱ (2010թ.)	9,3 միլիարդ ԱՄՆ դոլար *
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (2010թ.)	3 090 ԱՄՆ դոլար
Արտաքին առևտություն շրջանառությունը (2011թ.)	525,3 միլիոն ԱՄՆ դոլար
– Արտահանում	– 142,9 միլիոն ԱՄՆ դոլար
– Ներմուծում	– 382,4 միլիոն ԱՄՆ դոլար
Հիմնական առևտություն գործընկերները (2008-2011թթ.)	Արտահանման երկրներ՝ Բելգիա, Վրաստան, Գերմանիա, Նիդերլանդներ, Իսրայել, Շվեյցարիա, ԱՄՆ Ներկրման երկրներ՝ Ռուսաստան, Չինաստան, Ուկրաինա, Գերմանիա, Թուրքիա, , Իրան
Ինֆլյացիա (2010թ.)	9,4%
Միջին ամսական աշխատավարձը (2011թ.)	316 ԱՄՆ դոլար (114463,0 ՀՀԴ)
Գործազրկության մակարդակը (2011թ.)	7%
Աշխատուժ (2011)	64,6%
Կյանքի միջին տևողությունը (2011թ.)	74,1 (սոլամարդիկ՝ 70,6 տարի – կանայք՝ 77,2 տարի)
Կրթվածության մակարդակը (2011թ.)	98,6%

* Միջին փոխարժեքը՝

2010թ. 1 ԱՄՆ դոլարը = 373,7 ՀՀԴ

2011թ. հունվար – սեպտեմբեր ամիսներին՝ 1 ԱՄՆ դոլարը = 361,7 ՀՀԴ

Աղբյուր՝

- <http://www.president.am>
- <http://parliament.am>
- <http://www.gov.am>
- <http://www.concourt.am>
- <http://www.court.am>
- <http://www.academy.am>
- <http://www.etchmiadzin.com>
- <http://armstat.am/am>
- <http://www.cba.am>
- <http://www.ada.am>
- <http://data.worldbank.org>

ԲԱԺԻՆ 2

**ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՐՔ
ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Մերօրյա Սփյուռքն ընդգրկում է Հայրենիքից դուրս հաստատված հայկական համայնքները: 1920-ական թվականներից Հայաստանից դուրս, տարբեր երկրներում համախումբ ապրող հայությունն անվանվեց «Հայկական Սփյուռք» (Armenian Diaspora): Այսօր աշխարհում ապրում են ավելի քան տասը միլիոն հայեր, որոնց շուրջ մեկ երրորդը՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում: Հայկական ամենամեծաբիկ համայնքները գտնվում են Ռուսաստանում (2 միլիոնից ավելի), ԱՄՆ-ում (շուրջ 1,5 միլիոն) և Ֆրանսիայում (շուրջ 0.5 միլիոն): Նշանակալից հայկական համայնքներ կան Վրաստանում, Իրանում, Ուկրաինայում, Լեհաստանում, Լիբանանում, Թուրքիայում, Սիրիայում, Արգենտինայում և Կանադայում: Հայկական համայնքներ կան նաև Հնդկաստանում, Նոր Զելանդիայում, Աֆրիկայում, Սինգապուրում, Հոնկոնգում, Չինաստանում, ճապոնիայում և Ֆիլիպիններում:

Բոլոր ժամանակներում Սփյուռքի համար գերխնդիրը եղել և մնում է հայապահպանությունը՝ ազգային ինքնության պահպանումը այլ պետությունների քաղաքական, տնտեսական, նշակութային ներգործության պայմաններում: Սփյուռքում հայապահպանության, ազգային ինքնության պահպանության և հայության իրավունքների ձեռքբերման գործում անուրանալի դեր են կատարել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իր նվիրապետական աթոռներով, ինչպես նաև համահայկական տարբեր կառույցներ՝ կուսակցություններ Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), Սոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՍԴԿ) և միություններ, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸ):

21-րդ դարում Հայաստանի Հանրապետության ու աշխարհասիյուր հայության առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև ու բովանդակություն հաղորդել Հայաստան-Սփյուռք հարաբերություններին: Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքանությունը, որը պաշտոնապես սկզբնավորվել է 2008թ. որդեգործ է տարբերակված մոտեցումներ և լուծումներ՝ ուղղված հայության տարբեր հատվածների, տարածաշրջանների յուրաքանչյուր համայնքի կարիքների բավարարմանը, նրանց ներուժի ներառմանը համապատասխան ծրագրերում:

1991թ. Հայաստանի անկախության հօչքումից ի վեր, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները բարձրացվեցին նոր նակարդակի, իսկ գործակցությունն իրականացվում է տարբեր ուղղություններով՝ Հայաստան-Սփյուռք կապեր, պաշտոնական դիվանագիտության, հայկական Եկեղեցիների, համահայկական կազմակերպությունների, Սփյուռքում գտնվող առանձին անհատների և կազմակերպությունների միջոցով: Այս ընթացքում տարբեր հայկական համայնքներում կառուցվել և վերակառուցվել են հայկական Եկեղեցիներ, իհմնվել է նոր թեմեր : «Հայաստան» հիմնադրամի ստեղծումը Հայաստանի, Սփյուռքի և Լեռնային Ղարաբաղի համագործակցությունը համակարգելու առաջին քայլն էր: «Հայաստան-Սփյուռք» խորհրդաժողովների միջոցով հնարավոր եղավ քննարկել Հայրենիքի հետ Սփյուռքի փոխգործակցության ձեռքբերումները, գնահատել աշխարհում նոր մարտահրավերները և կանխատեսել հայ ժողովրդի առաջընթացի համար նոր հնարավորությունները: Կրթության, մշակույթի, գիտության, գործարարության և երիտասարդության բնագավառներում կազմակերպվեցին և իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ:

Հայաստանի անկախացումից ի վեր Սփյուռքի ներգրավումը ՀՀ տնտեսական կյանքում աստիճանաբար ընդլայնվել է Հայաստանում օտարերկրյա ներդրումների ծավալի աճին գուգընթաց: Այսպես, 1991-2007թ. Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ընդհանուր գումարային ծավալը կազմել է 3,5 մլրդ ԱՄՆ դոլար, որից՝ 2000-2007թթ. ավելի քան 2,9 մլրդ ԱՄՆ դոլար: 2007թ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքը կազմել է 845,4 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 34,6%-՝ 2006թ. համեմատությամբ): 2008թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գումարային ՕՈՒՆ/ՀՆՍ հարաբերակցությունը կազմել է 27,2%: 2008թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 3698 ընկերություն: Ընդ որում, Հայաստանում գործունեություն ծավալած օտարերկրյա ներդրողների շուրջ 70%-ը սփյուռքահայեր են, կամ նրանց հետ գործարար կապեր ունեցող այլազգիներ, իսկ սփյուռքահայերի կատարած ներդրումների բաժինն ընդհանուրի մեջ կազմում է շուրջ 30%: Հայաստանում Սփյուռքի հետ կապված ՕՈՒՆ աղյուրի տեսանկյունից առաջատար դիրք են գրավում երեք երկրներ՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Իրանը, որոնց հաջորդում են Ֆրանսիան, Սիրիան և Լիբանանը: 2008թ. համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի պայմաններում օտարերկրյա ներդրումային հոսքը նվազեց, որը սակայն արագ վերականգնվեց 2010թ. դրական ցուցանիշներ ապահովելով առ այսօր:

Սփյուռքի ներդրումային գործունեությունը մեծապես նպաստել է Հայաստանի տնտեսության

զարգացմանը շինարարության, Ֆինանսական ծառայությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության և ադամանդագործության, գրոսաշրջության և հյուրանոցային ծառայությունների, առողջապահական ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և սննդարդյունաբերության, թերև արդյունաբերության, մանրածախ և մեծածախ առևտության, ժամանցի կազմակերպման, արդյունաբերական արտադրության, գործիքաշինության, ուղևորափոխադրման, իրատարակչական և տպագրական ծառայությունների, իրավաբանական և խորհրդատվական ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններում ընդհանուրապես:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման, դրա շարունակական կատարելագործման ու պետական այլ մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով 2008թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության կազմում գործում է ՀՀ սփյուռքի նախարարությունը:

ՀՀ սփյուռքի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը հանրապետության նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է Հայաստանի ու Սփյուռքի հետ կապերի ամրապնդման, դրանց գործակցության զարգացման, Սփյուռքի ներուժի հայտնաբերման, ներգաղթին աջակցելու, պետական և հասարակական այլ մարմինների հետ համագործակցության, օրենքով, իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև համագործակցում է դիվանագիտական ծառայությունների հետ՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների շրջանակներում:

Հայաստան-Սփյուռք գործակցության նպատակը Հայրենիքում հաստատված կամ օտար երկրում բնակվող յուրաքանչյուր հայ մարդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ սփյուռքահայի իիմնարար իրավունքների և ազատությունների, օրինական շահերի, այդ թվում՝ լեզվի, մշակույթի, դպրության, ազատ տեղաշարժվելու իրավունքների պաշտպանությունն է միջազգային իրավունքի շրջանակներում, նրա ինքնության պահպանությունը՝ հայապահպանությունը, ինչպես նաև Հայրենիքի ու Սփյուռքի միջև կապերի սերտացումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության իիմնական խնդիրներն են.

- նպաստել հայկական ազգային ինքնության պահպանման ու արմատավորմանը,
- աջակցել Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի հայտնաբերմանը և ներգրավմանը՝ Հայաստանի ու Սփյուռքի զարգացման գործնթացներում,

• աջակցել հայ մարդու լիարժեք ինտեգրմանը բնակության կամ քաղաքացիության երկրի հասարակական, քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքին, եթե այն արգելք չէ հայապահպանմանը,

• նպաստել այլալեզու և այլակրոն հայերի շրջանում հայկական ազգային ինքնության հաստատմանն ու արմատավորմանը, նրանց «հայադարձությանը»,

• մշակել տարածաշրջանային ռազմավարական ծրագրեր՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները,

• աջակցել համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ձևավորման ու զարգացմանը,

• մշակել ազգահավաքն ու հայրենադարձությունը խթանող ծրագրեր, աջակցել հայոց պետականության ամրապնդմանը,

• նպաստել հայկական համայնքների համախմբմանը,

• աջակցել հայկական ուսումնական հաստատությունների զարգացմանը,

• աջակցել տարբեր համալսարաններում գործող հայագիտական կենտրոններին, ամբիոններին և մշակել առանձին ծրագրեր:

Այս ամենի մասին ավելի մանրամասն տես ՀՀ կառավարության և ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակված Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը, որը գետեղված է <http://www.mindiaspora.am> վեր կայքում:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման սկզբունքները ամրագրված են ՀՀ Նախագահի քաղաքական ծրագրում (ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ծրագիրը <http://www.president.am/library/program/arm>), որում համայն հայության միացյալ ներուժը համարվում է որպես Հայաստանի մրցակցային առավելություն համաշխարհայնացվող աշխարհում:

ԲԱԺԻՆ 3

ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԵՐԻ ՀԱՍԱՐ ԳՈՐԾՈՂ՝
ՎԵՐԱԴԱՐՁԻ, ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԵՐԸ

«Հայաստանի Հանրապետությունը...
նպաստում է... այլ պետություններում գտնվող հայկական
պատմական և մշակութային արժեքների պահպանմանը,
հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 11 (2))

«ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳԻՌԸ

Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան պարերական այցելությունների «Արի տուն» ծրագիրը ՀՀ սփյուռքի նախարարության հայապահպանության ուղղությամբ իրականացվող հիմնարար և շարունակական ծրագրերից է: Այն գործում է 2009թ. մայիսից:

Ծրագրի նպատակն է՝

- աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստանը՝ որպես եթնիկ Հայերնիք,

• նպաստել սփյուռքահայ երիտասարդության մեջ Հայրենիքի զգացողության ձևավորմանը,

• արմատավորել ազգային արժեքային համակարգ, ազգային ինքնության գիտակցություն, սփյուռքահայ երիտասարդությանը ծանոթացնել հայ ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ լընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին,

• աջակցել Հայաստան-Սփյուռք բարոյահոգերանական, կրթամշակութային մերձեցմանը:

Երկշաբաթյա փուլերի ընթացքում Սփյուռքի տարբեր տարածաշրջաններից 13-20 տարեկան երիտասարդներ, խմբեր հյուրներակալվում են հայաստանյան ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում (ծրագրի ճամբարային բաղադրիչը ավելացվել է 2011թ.): Մասնակիցների համար կազմակերպվում են շրջագայություններ երևանյան և հայաստանյան այլ պատմամշակութային, տեսարժան վայրեր, այցելություններ ցուցահանդեսներ, պատկերասրահներ, բանգարաններ բարձրագույն ուսումնական, այլ հաստատություններ, զորամասեր, համահայկական կազմակերպություններ և մասնակցություն հայաստանյան երիտասարդական միջոցառումների, համերգների, բատերական ներկայացումների, փառատոնների, հանդիպում-ընդունելությունների: ճամբարային ծրագրում ընդգրկված են հայրենագիտության, ազգային երգերի ու պարերի, արվեստի դասեր, ճանաչողական բազմաթիվ միջոցառումներ և պետական, քաղաքական, մշակույթի ճանաչված գործիչների հետ համուկումներ, ուսուցողական, պատմական ֆիլմերի դիտում և քննարկումներ, հայրենաճանաչության, ժամանցային ու ակտիվ հանգստի բազմապիսի միջոցառումներ:

Սփյուռքի հայ համայնքներում երիտասարդական խմբերը ձևավորվում և Հայաստան են տեղափոխվում օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների, Սփյուռքի համայնքային կառույցների, կրթօջախների, համահայկական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների աջակցությամբ: Ծրագրի մասնակից երիտասարդները ճանապարհածախսը հոգում են իրենք՝ կամ սեփական միջոցների, կամ գործող համայնքային հասարակական և այլ կազմակերպությունների ու կառույցների, կամ այլ հովանավորների միջոցների հաշվին: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը հատկացված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով ապահովվում են երիտասարդների դիմավորումը, ճանապարհումը, միջոցառումների լայն ծրագրի իրականացումը, ինչպես նաև ծրագրի միջոցառումների մասնակցության համար տրանսպորտային միջոցներ, սնունդ, ծրագրային միջոցառումների լուսանկարահանում, տեսանկարահանում, տրամադրվում են ծրագրի տարբերանշանով պարագաներ, անհրաժեշտ տպագիր և էլեկտրոնային նյութեր:

Սփյուռքի երիտասարդության Հայաստան այցելությունների «Արի տուն» ծրագիրը հաջողությամբ իրականացվում է արդեն երեք տարի և արդեն կայացած պետական ծրագիր է, որը մեծ թափ է առել, լայն արձագանք գտնել և մեջ խանդապահությամբ է ընդունվում Սփյուռքի ամենատարեր հատկաներում: Տարեցտարի ավելանում է մասնակիցների թիվը, ընդլայնվում՝ մասնակցության երկրների աշխարհագրությունը.

2009թ. ծրագրին մասնակցել և հայաստանյան ընտանիքներում հյուրընկալվել է 307 երիտասարդ՝ աշխարհի 14 երկրից,

2010թ. շուրջ 600 երիտասարդ աշխարհի 26 երկրից,

2011թ. շուրջ 800 երիտասարդ՝ 30 երկրից:

Ծրագիրը կրում է շարունակական բնույթ:

Ծրագրին մասնակցելու, դիմումի ծեփ և այլ տեղեկությունների համար դիմել.

ՀՀ սփյուռքի նախարարություն

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1

Հեռախոս՝ (+37410) 585601/117

Ֆաքս՝ (+37410) 589157

Վեբ կայք՝ www.mindiaspora.am

Էլ. փոստ՝ allarmenian@mindiaspora.am

«ՀԱՅ ԿԱՍԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

«Հայ կամավորների միությունը» հիմնվել է 2000թ.:

Այս կազմակերպության գործունեության հիմնական նպատակը սփյուռքահայերի ներուժի օգտագործումն է Հայրենիքի կայացման և զարգացման գործում:

Կազմակերպության ծրագրերի շնորհիվ սփյուռքահայերին հնարավորություն է ընձեռվում գալու և աշխատելու Հայաստանում մեկ ամսից մինչև մեկ տարի ժամկետով:

Միություն կարող են դիմել այն սփյուռքահայերը, որոնք ցանկանում են կամավոր հիմունքներով օգտակար լինել Հայրենիքին: Կազմակերպությունը տարիքային սահմանափակում չի դնում:

Կամավորներն աշխատում են հասարակական կազմակերպություններում, նախարարություններում և այլ հիմնարկներում, որոնք կամավոր աշխատողների կարիք ունեն:

Կամավորների համար տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ սեմինարներ, հայոց լեզվի դասեր, ճանաչողական շրջագայություններ են կազմակերպվում:

Հայաստանում գտնվելու ժամանակահատվածում կամավորները ապրում են իրենց հյուրընկալող հայկական ընտանիքներում, որտեղ որոշակի վարձատրման դիմաց նրանց սենյակ ու սնունդ է տրամադրվում:

Ծրագրին մասնակցելու, դիմումի ծևի և այլ տեղեկությունների համար դիմել.

«Հայ կամավորների միություն»

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 37

Հեռախոս՝ (+34710) 540037

Էլ. փոստ՝ info@avc.am

Վեբ կայք՝ <http://www.armenianvolunteer.org>

«ԴԵՊԻ ՀԱՅՔ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

«Դեպի Հայք» բարեգործական հիմնադրամը հիմնադրվել է 2004թ.:

Կազմակերպության հիմնական նպատակներն են՝

- Սփյուռքի երիտասարդության իր պատմական Հայրենիքին՝ Հայաստանին, ծանոթացնելը.
- Հայաստանի և Սփյուռքի երիտասարդության կապերի ամրապնդումը:

Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում 20-ից 32 տարեկան սփյուռքահայ երիտասարդները նվազագույնը երկու ամսից մինչև մեկ տարի կամավորական աշխատանք են կատարում ավելի քան 150 մասնավոր, պետական և հասարակական կառույցներում: Երիտասարդն ինքն է ընտրում, թե որ ոլորտում և ինչ աշխատանք է ցանկանում կատարել:

Ողջ նախագծի ընթացքում մասնակիցները ոչ միայն ծանոթանում են իրենց պատմական Հայրենիքին, այլև մասնագիտանում են իրենց բնագավառում:

Բարեգործական հիմնադրամը կամավորների համար տարբեր միջոցառումներ, այդ թվում՝ սեմինարներ, հայոց լեզվի դասեր, տեղի երիտասարդության հետ հանդիպումներ, ճանաչողական շրջագայություններ է կազմակերպում:

Բոլոր ծախսերը, այդ թվում երթևեկության ծախսերը, հիմնադրամն իր վրա է վերցնում: Ողջ ծրագրի իրականացման ընթացքում կամավորներն ապրում են հայկական ընտանիքներում:

Ծրագրին մասնակցելու, դիմումի ծևի և այլ տեղեկությունների համար դիմել.

ԱՄ-ՌԱ

“Birthright Armenia” «Բրդրայք Արմենիա»

Հասցե՝ Լանքասթեր պողոտա 333/N 330
Վայնվուդ, Փենսիլվանիա 19096-9981
Հեռախոս՝ 6106426633
Էլ. փոստ՝ info@birthrightarmenia.org
Վեբ կայք՝ <http://www.birthrightarmenia.org>
Հայաստանում՝
«Դեպի Հայք»
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 37
Հեռախոս՝ (+34710) 540037
Էլ. փոստ՝ info@birthrightarmenia.am
Վեբ կայք՝ <http://www.birthrightarmenia.org>

«TOKTEN» ԾՐԱԳԻՐԸ

«Գիտելիքների փոխանցում Սփյուռքի հայրենակիցների միջոցով» (TOKTEN) ծրագիրն իրականացվում է Հայաստանի ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ «Գլոբալ Հայաստան» նախաձեռնության շրջանակներում:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը այլ պետությունում ապրող իր հայրենակիցների միջոցով:

Ծրագրի շնորհիվ փորձառու սփյուռքահայերը հնարավորություն են ստանում իրենց մասնագիտական փորձը, խորհրդատվական և հետազոտական ծառայությունները տրամադրել կենտրոնական և տեղական իշխանություններին, մասնավոր և հանրային սեկտորի ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական կենտրոններին այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են շրջակա միջավայրը, կրթությունը, գիտությունը, առողջապահությունը, հանրային կառավարումը, ձեռնարկությունների կառավարումը և տեղեկատվական համակարգը:

Ծրագրի մասնակիցների ճանապարհորդության և Հայաստանում կացության ծախսերը հոգում է ՄԱԶԾ-ն:

Այս ծրագրին կարող են դիմել այլ պետությունում բնակվող և մշտական կացություն կամ քաղաքացիություն ունեցող շահագրգուված հայ մասնագետները:

Ծրագրին մասնակցելու, դիմումի ծնի և այլ
տեղեկությունների համար դիմել.
Սառա Սանգոյ
ՄԱԿ-ի կամավորների ծրագրի պատասխանատու
ՄԱԶԾ, Հայաստան
Հեռախոս՝ (+34710) 566073 (+ 224)
Էլ. փոստ՝ sara.sangoi@undp.org
Հովհաննես Սարաջյան
Հասարակայնության հետ կապերի գծով պատասխանատու
ՄԱԶԾ, Հայաստան
Հեռախոս՝ (+34710) 566073 (+ 128)
Էլ. փոստ՝ hovhannes.sarajyan@undp.org

«ՄԻԳՐԱՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՈՒՍԱՏԱՆԻ ՂԱՇՆՈՒԹՅՈՒՆԻՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴՐԱԿԱՆ ԱԶԹԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԱԴՐԵՖԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ԱՄ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագիրն իրականացվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից Ուուսաստանում, Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում՝ 2010-2012թթ. ընթացքում: Այն ֆինանսվում է Եվրոպական Միության կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել Ուուսաստանում միգրանտ աշխատողների պաշտպանության մակարդակը և ընդլայնել միգրացիայի դրական ազդեցությունը Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ուուսաստանում և միգրանտների ծագման երկուներում ապահովել թիրախային ոլորտներում միգրանտ աշխատողների տեղեկատվության հասանելիությունը, այդ թվում, ընդունող երկիր

մուտք գործելու նորմերն ու ընթացակարգերը, ինչպես նաև արհմիությունների ծառայություններից օգտվելու և դրանցում մասնակցելու նրանց իրավունքները.

- Ուսուաստանում բարձրացնել թիրախային ոլորտներում աշխատողների իրազեկումը, օժանդակել միգրանտ աշխատողների հավաքագրմանը այն ոլորտներում, որտեղ գրանցվել է աշխատուժի պակաս, բարելավել շինարարական ոլորտում միգրանտների աշխատանքային պայմանները.
- Ուսուաստանում և ծագման երկրում ընդլայնել կառավարման մարմինների հնարավորությունները՝ ուղղված միգրացիայի արդյունավետ կառավարմանն ու համագործակցության ուժեղացմանը.
- օժանդակել Հարավային Կովկասի երկրներում Հայաստանում, Արբեջանում և Վրաստանում, միգրացիայի զարգացմանը և զարգացման ռազմավարության մշակմանը: Ծագման երկրների զարգացմանը նպաստելու նպատակով նպաստել միգրանտների, Սփյուռքի և Վերադարձողների համար համապատասխան մեխանիզմների ստեղծմանը և ուժեղացմանը:

Սույն ձեռնարկը մշակվել և վերամշակվել է Ծրագրի շրջանակներում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել.
ԱՄԿ ազգային համակարգող՝ Նունե Հովհաննիսյան
Հեռ.՝ (+374 10) 543 972
Էլ. փոստ՝ hovhannisyan@ilo.org

«ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԵՐԱԲԵԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆԸ» ԾՐԱԳԻՐԸ («ՏՈՒՆԱՐՉ»)

Ծրագիրը Եվրամիության ֆինանսական օժանդակությամբ իրականացվում է 2007թ.՝ Բրիտանական խորհրդի երևանյան գրասենյակի (<http://www.britishcouncil.org/armenia.htm>), ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության (<http://smsmta.am>) և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (www.ichd.org) սերտ համագործակցությամբ:

Ծրագիրը նպատակ ունի՝

- կանխարգելել անօրինական միգրացիան,
- աջակցել վերադարձի և վերահնտեղության գործընթացների արդյունավետության բարձրացմանը,
- միգրացիոն քաղաքականությունն ու օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի համրաճանաչ նորմերին ու սկզբունքներին:

Ծրագրի շրջանում արդեն իսկ ստեղծված է www.backtoarmenia.com վեբ կայքը, որտեղ այլ պետություններում գտնվող պոտենցիալ վերադարձողները կարող են ոչ միայն վերադարձի և Հայրենիքում վերահնտեղության հարցերով արժեքավոր տեղեկություններ քաղել, այլև ուղիղ համացնցային կապի միջոցով ստանալ հուզող հարցերի սպառիչ պատասխաններ:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել.
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դաշտավան 4
Հեռախոս՝ (+374 10) 264163
Ֆաքս՝ (+374 10) 225824
Էլ. փոստ՝ info@backtoarmenia.am

ԲԱԺԻՆ 4

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ
ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ
ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻճԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԿՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք հավասար են իրենց իրավական կարգավիճակով՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք բնակվում են ՀՀ տարածքից դուրս, թե ՀՀ տարածքում: Նրանք օգտվում են նույն իրավունքներից և ազատություններից, կրում են նույն պարտականությունները:

1. ԸՆՏՐԵԼՈՒ և ԾՆՏՐՎԵԼՈՒ, ԻԱՆՐԱՔՎԵՒԻՆ մԱՍՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՎԻԱԿՈՒՄՆԵՐԸ

2011թ. մայիսին ընդունված նոր ՀՀ ընտրական օրենսգրքով ընտրություններն անցկացվում են միայն ՀՀ տարածքում, հետևաբար այլ պետություններում մշտապես բնակվող կամ գտնվող ՀՀ քաղաքացիներն ընտրություններին չեն մասնակցում:

Բացառություն են կազմում՝

- քվեարկության օրը ՀՀ տարածքից դուրս գտնվող դիվանագիտական ծառայություն անցնող ՀՀ քաղաքացիները,
- նրանց հետ արտերկրուտ բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները,
- ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները,
- նրանց հետ արտերկրուտ բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Նշված անձինք կարող են մասնակցել ընտրություններին՝ քվեարկություն էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային քվեարկության կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը¹: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն էլեկտրոնային եղանակով քվեարկողների կամքի ազատ արտահայտման հնարավորությունը և քվեարկության գաղտնիությունը:

ՀՀ քաղաքացին կարող է իր թեկնածությունն առաջարել ընտրություն միայն այն դեպքում, եթե մշտապես բնակվում է ՀՀ տարածքում:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանափակվում է նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու հնարավորությունը:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Լրացրւիչ տեղեկությունների համար այցելել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական վեր կայքը՝ www.elections.am:

2. Այլ պետությունում հաշվառման կանգնելը

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ տարածքից դուրս 6 ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ 6 ամսից ավելի ժամկետով բնակվող ՀՀ քաղաքացին պարտավոր է այլ մասին գրավոր տեղեկացնել դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը (ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ցանկի համար տես՝ Հավելված 2):

Այլ պետություն մշտական բնակության ժամանած ՀՀ քաղաքացին պարտավոր է մշտական բնակության հյուպատոսական հաշվառման կանգնելու համար դիմել ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն՝ ներկայացնելով՝

- դիմում՝ հյուպատոսական հաշվառման կանգնելու խնդրանքով,
- հյուպատոսական հաշվառման հարցաթերթիկ,
- ամձնագիր,
- 35x45 չափսի մեկ լուսանկար,
- տվյալ պետությունում մշտական բնակչի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացու անձնագրում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության կողմից կարող է կատարվել նշում՝ այլ պետությունում մշտապես բնակվելու

¹ Նշված կարգը կարելի է գտնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական վեր կայքում:

մասին:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Դիմումի, հարցաքերթիկի ձևերը, հաշվառման սակագները, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղեկություններ կարելի է գտնել ՀՀ արտաքին գործերի նախարարության (<http://www.mfa.am>) և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (<http://www.passportvisa.am>) պաշտոնական վեբ կայքերից:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու պարտականությունը

Անկախ մշտական բնակության վայրից՝ ՀՀ քաղաքացիները պարտավոր են մասնակցել Հայրենիքի պաշտպանությանը՝ օրենքով սահմանված կարգով (տես՝ Բաժին 6):

4. Հայաստանի Հանրապետության անձնագիր ունենալու պարտականությունը

ՀՀ քաղաքացու անձնագիր պարտավոր են ունենալ ՀՀ 16 տարին լրացած բոլոր քաղաքացիները՝ անկախ բնակության վայրից:

ՀՀ քաղաքացիներն այլ պետություններում բնակվում են ՀՀ քաղաքացու անձնագրով:

Այլ պետություններում ՀՀ քաղաքացիների անձնագրերը տրվում կամ փոխանակվում են ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների կողմից:

5. Պատասխանատվությունը Հայրենիքի պաշտպանությանը չնաև կանոնակշելու, հաշվառման կանգնելու կամունները խախտելու, առանց անձնագրի բնակվելու համար

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ զինվորական կամ այլընտրանքային ծառայության, հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար քաղաքացին ենթակա է քրեական պատասխանատվության, մասնավորապես՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմանը՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով վարչական պատասխանատվությունը է սահմանվում՝

- առանց անձնագրի կամ առանց հաշվառման բնակվելու համար:
- ՀՀ տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող ՀՀ քաղաքացու (ինչպես նաև ՀՀ-ից դուրս ծնված ՀՀ քաղաքացու) կողմից մշտական բնակության վայրի հասցեի վերաբերյալ ՀՀ համապատասխան դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը չտեղեկացնելու համար:

Երկու արարքներն ել առաջացնում են նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև նվազագույն աշխատավարձի չափով²:

Բ. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱԶԳՈՒԹՅԱՍՔ ՀԱՅ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ, ԻՐԱՎՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Օտարերկրացու իրավական վիճակը Հայաստանում

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում օտարերկրացիներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Օտարերկրացիներն ունեն սեփականության, աշխատանքի, ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու, կրթություն ստանալու և այլ իրավունքներ: Առանձին դեպքում նրանք կարող են ունենալ նաև ընտրելու իրավունք: ՀՀ-ում օտարերկրացիները պարտավոր են հարգել ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, իրավական այլ ակտերը, ազգային սովորությունն ու ավանդույթները:

Օտարերկրացիների իրավունքները պաշտպանելիս օգտվում է ՀՀ քաղաքացու իրավունքների իրականացման համար սահմանված բոլոր երաշխիքներից, ինչպես նաև օգտվում է իր

² Այս համատեքստում նվազագույն աշխատավարձի չափը է հանդիսանում 1.000 ՀՀԴ:

քաղաքացիության պետության դիվանագիտական պաշտպանությունից:

ՀՀ տարածքում օտարերկրացիները կրում են ՀՀ քաղաքացիներին հավասար պատասխանատվություն, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերի:

ՀՀ տարածքով տարանցիկ երթևեկության իրավունք ունի յուրաքանչյուր օտարերկրացի, ով ներկայացնում է դեպի երրորդ երկիր ուղետում և (կամ) երրորդ երկիր մուտքի վիզան: Նրանք ՀՀ տարածքում կարող են մնալ 72 ժամից ոչ ավել (բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի):

Եթե օտարերկրացին գտնվում է տարանցիկ գոտում և չի մտնելու ՀՀ տարածք, ապա նա կարող է գտնվել տարանցիկ գոտում 48 ժամից ոչ ավել (բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի):

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Օտարերկրացին չի կարող՝

- առանց վիզայի մուտք գործել ՀՀ տարածք,
- ընտրել և ընտրվել³,
- մասնակցել հանրաքվեի,
- ընդունվել հանրային ծառայության,
- ստեղծել կուսակցություն և/կամ անդամագրվել դրան,
- բոլոր տեսակի հողերի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք (տես՝ Բաժին 11):

2. Ազգությամբ հայ օտարերկրացու իրավական վիճակը Հայաստանում

Ազգությամբ հայ օտարերկրացու իրավական վիճակը տարբերվում է մյուս օտարերկրացու իրավական վիճակից նրանով, որ՝

- ազգությամբ հայ օտարերկրացուն կարող է տրվել ինչպես ժամանակավոր և մշտական, այնպես էլ հասուն կացության կարգավիճակ (տես՝ Բաժին 7),
- ազգությամբ հայ օտարերկրացին ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն պարզեցված կարգով (տես՝ Բաժին 5):

Այն անձանց, ում շնորհվում է հատուկ կացության կարգավիճակ տրվում է հատուկ տեսակի անձնագիր՝ 10 տարի ժամկետով, որը հնարավորություն է տալիս՝

- առանց մուտքի վիզայի ճամփորդել Հայաստան.
- Հայաստանում օգտվել հողի նկատմամբ սեփականության իրավունքից:

Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն անձնագիր ստանալու համար

Անձնագիր ստանալու համար ՀՀ քաղաքացիները ներկայացնում են՝

- ա) սահմանված ձևի դիմում (այլ պետություններում դիմումի ձևը տրամադրվում է ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության կողմից),
բ) ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալն ստացած ՀՀ քաղաքացու անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթղթեր, եթե ՀՀ քաղաքացին չի կարող ներկայացնել սույն կետում նշված փաստաթղթերը.
գ) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր),
դ) ծնողների կամ ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը (մինչև 16 տարին լրանալն անձնագիր ստացողները): Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը անձանք չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով.
ե) կցագրման վկայական կամ գինվորական գրքույկ (գինապարտները) (տես՝ Բաժին 6):

³ Գոյություն ունի մեկ բացառություն. ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի և ավագանու) ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև համապատասխան համամեռում մինչև քենարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

2. Ինչպե՞ս վերականգնել այլ պետությունում ՀՀ քաղաքացու անվավեր ճանաչված կամ կորցրած անձնագիրը

Այլ պետությունում գտնվող ՀՀ քաղաքացին անվավեր ճանաչված կամ կորցրած անձնագիրը վերականգնելու համար դիմում է տվյալ երկրում գտնվող ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

Եթե տվյալ երկրում չկա ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն, ապա նա կարող է դիմել հարևան երկրում գտնվող ներկայացուցչությանը:

3. Ո՞վքեր կարող են օտարերկրացուն տալ ՀՀ այցելելու իրավեր:

Օտարերկրացուն ՀՀ այցելելու իրավեր կարող են տալ՝

- ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացին,
- ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին,
- ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք,
- ՀՀ պետական նարմինները, տեղական ինքնակառավարման նարմինները, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները (դրանց ներկայացուցչությունները):

ԲԱԺԻՆ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՈՒՄԸ

ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից և այլն:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիության ձեռքբերման հիմքերից մեկը ՀՀ քաղաքացիության ճանաչումն է: ՀՀ քաղաքացիներ են ճանաչվում՝

- ՀՀ-ում մշտապես բնակվող՝ նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը (1995թ. հուլիսի 13-ը) ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից՝ 1995թ. նոյեմբերի 28-ից 1996թ. նոյեմբերի 28-ն ընկած ժամանականքացքում,
- ՀՀ-ում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չիանդիսացող նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը դիմում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար,
- ՀՀ-ից դուրս բնակվող՝ ազգությամբ հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն:

Բ. ԱԶԳՈՒԹՅԱՎՐ ՀԱՅԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ (այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող) իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

- ա) վերջին երեք տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում.
- բ) կարող է բացատրվել հայերենով և
- գ) ծանոթ է ՀՀ սահմանադրությանը:

Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն կարող են ստանալ առանց վերը նշված երեք պահանջների պահպանման: Իսկ այն անձանց համար, ովքեր, օրինակ՝ ամուսնացել են ՀՀ քաղաքացու հետ կամ ունեն ՀՀ քաղաքացի երեխա, ՀՀ քաղաքացիություն ստանալու համար բավարար է ՀՀ Սահմանադրությանը ծանոթ լինելը: Վերջինիս ստուգման համար անցկացվում է թեստավորում (տես՝ Հավելված 4):

ՀՀ քաղաքացու համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում ՀՀ քաղաքացու անձնագիրը:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Ներկայունս ՀՀ անձնագիրը ծառայում է և որպես ճամփորդական փաստաթուղթ, և որպես երկրի ներսում անձի նույնականացման միջոց: 2012 թվականի հունվարի 1-ից այս գործառույթները կրամանվում են կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտի միջև: 16 տարին լրացած ցանկացած ՀՀ քաղաքացի կունենա էլեկտրոնային նույնականացման քարտ, որը կիրարական անձնագրի համար կառավագական էլեկտրոնային անձնագիրը կօգտագործվում: Էլեկտրոնային անձնագիրը կօգտագործվում դամփորդական փաստաթուղթ ՀՀ տարածքից դուրս ճանփորդող ՀՀ քաղաքացիների համար:

Հավելված 1 տեղեկությունների համար այցելել ՀՀ կառավարության կողմից ստեղծված էլեկտրոնային կառավարման ներակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) պաշտոնական կայք էջը՝ <http://www.ekeng.am>:

1. Քաղաքացիություն ձեռք բերելու համար փաստաթուղթը ներկայացնելու ոնթացակարգը և ժամկետները

Անձը ՀՀ քաղաքացիություն ստանալու համար փաստաթուղթը ներկայացնում է՝

- ՀՀ-ում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն,

- այլ պետությունում՝ ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ, որն օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում, կարող է բացատրվել հայերենով և ծանօթ է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիություն ստանալու համար անձամբ ներկայացնում է՝

- 1) դիմում,
- 2) անձնագիրը և դրա պատճենը,
- 3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր),
- 4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Պարզեցված կարգով՝ առանց վերջին երեք տարին մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման, ՀՀ քաղաքացիություն ստանալու համար՝

- 1) այն անձը, որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա, անձամբ ներկայացնում է՝
 - 1) դիմում.
 - 2) անձնագիրը և դրա պատճենը.
 - 3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).
 - 4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.
 - 5) ամուսնության վկայականը և դրա պատճենը.
 - 6) ամուսնու անձնագիրը և դրա պատճենը կամ տեղեկանք ամուսնու քաղաքացիության մասին.
 - 7) իր երեխայի ծննդյան վկայականը (կամ ՀՀ քաղաքացու անձնագիրը, քաղաղաքիությունը հավաստող վկայականը) և դրա պատճենը.
 - 8) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,
- 2) այն անձը, որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է ՀՀ-ում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, անձամբ ներկայացնում է՝
 - 1) դիմում.
 - 2) անձնագիրը և դրա պատճենը.
 - 3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).
 - 4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.
 - 5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,
- 3) այն անձը, որը ծագումով հայ է, անձամբ ներկայացնում է
 - 1) դիմում.
 - 2) անձնագիրը և դրա պատճենը.
 - 3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).
 - 4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.
 - 5) հայկական ծագումը հաստատող փաստաթուղթը՝ ծնողի (պապի կամ տատի կամ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթը.
 - 6) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,
- 4) այն անձը, որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից, անձամբ ներկայացնում է
 - 1) դիմում.
 - 2) անձնագիրը և դրա պատճենը.
 - 3) 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր).
 - 4) ծննդյան վկայականը և դրա պատճենը.
 - 5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Փաստաթրերը ներկայացնելիս անձը լրացնում է հարցաթրիկ (տես՝ Հավելված 3):

Դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը փաստաթրերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում անձի համար նշանակում է ՀՀ Սահմանադրության իմացության ստուգման օր: Եթե ներկայացված փաստաթրերի ցանկն ամբողջական չէ, ապա դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն անձին առաջարկում է 5-օրյա ժամկետում համալրել այդ ցանկը: Դեսպանությունը կամ հյուպատոսական իիմնարկը, ՀՀ Սահմանադրության իմացության սահմանված կարգով ստուգման դրական արդյունքի դեպքում, 10-օրյա ժամկետում, համապատասխան փաստաթրերը, ՀՀ Սահմանադրության իմացության թեսքը և դրանց վերաբերյալ

Եզրակացությունն ուղարկում է ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը փաստաթղթերն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, դրանք, իր Եզրակացության հետ միասին, ուղարկում է ՀՀ ոստիկանություն, որը 10-օրյա ժամկետում ստացված փաստաթղթերն ուղարկում է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն:

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը փաստաթղթերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում տալիս է իր Եզրակացությունը:

ՀՀ ոստիկանությունը, փաստաթղթերը և դրանց վերաբերյալ Եզրակացություններն ստանալուց հետո՝ մեկամյա ժամկետում, կազմում է Եզրակացություն, որը ներկայացնում է ՀՀ Նախագահի աշխատակազմ:

Եթե դիմումը բավարարվում է, ապա ՀՀ Նախագահի հրամանագրով անձը ստանում է ՀՀ քաղաքացիություն:

Դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վճառում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ անձամբ: Օտար լեզվով փաստաթղթերը ներկայացվում են նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունների հետ միասին:

Առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պաշտոնական վեբ կայքի՝ <http://www.passportvisa.am>:

Գ. ԵՐԿՐՈԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2005թ. ՀՀ սահմանադրության փոփոխությունների հիման վրա ՀՀ քաղաքացին կարող է միաժամանակ լինել այլ պետության կամ պետությունների քաղաքացի (ՀՀ երկրադարձություն):

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- ՀՀ երկրադարձի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (պետությունների) քաղաքացիություն,
- ՀՀ երկրադարձին ՀՀ-ի համար ճանաչվում է **միայն որպես ՀՀ քաղաքացի:** Դա տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր 1995թ. հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու՝
 - 1) ընդունել կամ ստացել են այլ պետության քաղաքացիություն,
 - 2) միակողմանի հրաժարվել են ՀՀ քաղաքացիությունից,
- ՀՀ երկրադարձին ունի ՀՀ քաղաքցու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է ՀՀ քաղաքցու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի,
- ՀՀ քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին ՀՀ կառավարության սահմանած կարգով մեկամյա ժամկետում հայտնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանում, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն (տես՝ Հավելված 5): Զհայտնելը պատժվում է տուգանքով՝ 50.000 ՀՀԴ չափով:

Ազգությամբ հայերը երկրադարձիություն ձեռք բերելու համար ներկայացնում են սույն Բաժնի Բ պարագրաֆում թվարկված փաստաթղթերը:

ՀՀ երկրադարձուն տրվում է ՀՀ քաղաքցու անձնագիր:

1. ՀՀ ԵՐԿՐՈԱՔԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱռԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր կանոնի համաձայն, ՀՀ երկրադարձին ունի ՀՀ քաղաքցու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է ՀՀ քաղաքցու համար սահմանված բոլոր

պարտականությունները և պատասխանատվությունը: Միաժամանակ, օրենսդրությամբ ամրագրված են որոշ առանձնահատկություններ՝

- ՀՀ երկարաբացին չի կարող ընտրվել ՀՀ նախագահ, ԱԺ պատգամավոր, չի կարող լինել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Երևանի քաղաքապետ, չի կարող զբաղեցնել ՀՀ ազգային անվտանգության ծառայության պաշտոններ, ՀՀ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ,
- քրեական պատասխանատվություն է նախատեսվում այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում ՀՀ կառավարության լիազոր մարմնին չհայտնելու համար (տես՝ Հավելված 5),
- ՀՀ երկարաբացին չի ազատվում պարտադիր գինվորական ծառայությունից, եթե մինչև այլ պետության քաղաքացիություն ընդունելը հանդիսացել է ՀՀ քաղաքացի: (տես՝ Բաժին 6).

ՀՀ երկարաբացիները, եթե նրանք բնակվում են ՀՀ տարածքից դուրս, չեն մասնակցում ՀՀ-ում անցկացվող ընտրություններին: Նրանք կարող են ընտրություններին մասնակցել միայն այն դեպքում, եթե ՀՀ տարածքից դուրս անցնում են դիվանագիտական ծառայություն (կամ դիվանագիտի ընտանիքի անդամ են) կամ աշխատում են ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչություններում (տես՝ Բաժին 4):

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Որոշ պետություններում արգելվում է երկարաբացիությունը (կամ ոչ բոլոր պետությունների քաղաքացիությունը է ընդունվում): Նման պետության քաղաքացիները, ընդունելով այլ պետության (այդ թվում ՀՀ) քաղաքացիություն, մեխանիկորեն կորցնում են իրենց նախկին քաղաքացիությունը: Դեռևսաբար, այլ պետության քաղաքացիները, որոնք ցանկանում են դառնալ ՀՀ քաղաքացի, կամ ՀՀ քաղաքացիները, որոնք ցանկանում են դառնալ միաժամանակ այլ պետության քաղաքացի, պետք է նախապես տեղյակ լինեն տվյալ պետության քաղաքացիության վերաբերյալ օրենսդրության պահանջներին:

Դ. ՀԱՆԱԽ ՏՐՎՈՂ ԴԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է կարգավորվում ամուսինների քաղաքացիության հարցը

ՀՀ քաղաքացու ամուսնությունն օտարերկրացու հետ մեխանիկորեն չի հանգեցնում ամուսիններից որևէ մեկի քաղաքացիության փոփոխման, ինչպես նաև ամուսիններից մեկի քաղաքացիություն փոխելը չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության փոփոխման: Սակայն նշված հանգանակները կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիության փոփոխման համար:

2. Ինչպե՞ս է որոշվում երեխայի քաղաքացիությունը

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ է, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Այն դեպքում, եթե ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե՝

- նա ծնվել է ՀՀ-ում, կամ
- ՀՀ քաղաքացիություն ձեռք չըերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ
- ծնողները մշտապես բնակվում են ՀՀ-ում:

3. Ո՞վ է շնորհում ՀՀ քաղաքացիությունը

ՀՀ քաղաքացիությունը շնորհում է ՀՀ նախագահը՝ իրամանագրով:

4. Կարո՞ղ է դադարեցվել ՀՀ քաղաքացիությունը, եթե անձը որոշել է մշտապես բնակվել այլ պետությունում

ՀՅ-ից դուրս բնակվելը (այդ թվում՝ մշտապես բնակվելը) ինքնին չի հանգեցնում ՀՅ քաղաքացիության դադարեցնանք: Ավելին, օրենքով երաշխավորվում է, որ ՀՅ-ից դուրս բնակվող կամ գտնվող քաղաքացիներն օգտվում են ՀՅ-ի պաշտպանությունից և հովանավորությունից:

ԲԱԺԻՆ 6

ԶԻՍԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը: ՀՀ պաշտպանությանը մասնակցելու կարգը սահմանվում է «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով:

1. Զինապարտությունը և զինապարտները

Զինապարտությունը՝ ՀՀ պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝

- զինվորական հաշվառումը,
- զինվորական ծառայության նախապատրաստությունը,
- զորակոչը և զինվորական ծառայությունը,
- պահեստագորում գտնվելը:

Զինապարտներ են՝

- նախազորակոչչային տարիքի (16-18 տարեկան) արական սերի քաղաքացիները,
- զորակոչչային տարիքի (18-27 տարեկան) արական սերի քաղաքացիները,
- պահեստագորում հաշվառված արական սերի քաղաքացիները, ինչպես նաև
- զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սերի քաղաքացիները:

2. Քաղաքացիների զինվորական հաշվառումը

Զինվորական հաշվառումը նախազորակոչչիների (16-18 տարեկան քաղաքացիների), զորակոչչիների (18-27 տարեկան քաղաքացիների) և պահեստագորում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչչային, վարժահավաքային և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է:

Նախազորակոչչիների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում: Կցագրման ենթակա են տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող արական սերի քաղաքացիները: Կցագրումը կատարում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովները՝ ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին:

Այլ պետությունում մեկ ամսից ավելի բնակվող զինապարտների զինվորական հաշվառումը (կցագրումը) կատարում են դիվանագիտական մարմնները և հյուպատոսական իիմնարկները:

ՀՀ քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Այլ պետությունում բնակվող ՀՀ քաղաքացիները պարտավոր են ներկայանալ տվյալ պետության տարածքը սպասարկող դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական իիմնարկը:

ՀՀ քաղաքացիները, անկախ իրենց գտնվելու վայրից, 18 տարին լրանալուց հետո պարտավոր են նաև ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչչելու կամ օրենքով սահմանված կարգով զորակոչից տարկետում ստանալու համար: Զինվորական կոմիսարիատ ներկայանալը դիտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափում և առաջացնում է օրենքով սահմանված հետևանքներ (այդ թվում քրեական գործի հարուցում, քրեական հետախուզում և այլն):

Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական մարմին, հյուպատոսական իիմնարկ՝ զինվորական հաշվառումից դուրս գալուց և հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

Օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնող ՀՀ քաղաքացին հաշվառման (հաշվառում չունեցողը՝ ՀՀ-ում փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատում պարտավորագիր է ստորագրում օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունում հաշվառման կանգնելու վերաբերյալ:

Զինապարտներն իրենց ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝ ՀՀ-

ում փաստացի բնակության) վայրի, կրթության վայրի, աշխատանքի վայրի և պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել համապատասխան վայրի գինվորական կոմիսարիատ (դիվանագիտական մարմին, իյուպատուսական հիմնարկ):

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Մինչև 2009թ. դեկտեմբեր ամիսը ՀՀ օրենսդրությամբ այլ պետություն մշտական բնակության մեկնող ՀՀ գինապարտ քաղաքացիները կարող էին դուրս գալ գինվորական հաշվառումից՝ հատուի այդ նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի թույլտվությամբ: 2009թ. դեկտեմբերին «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, ինչպես նաև այդ փոփոխությունների արդյունքում ՀՀ կառավարության կողմից 2010թ. մայիսին ընդունված «Դաշտավայրի բարեկարգության օրենքի մասին» գինվորական հաշվառման կարգով» գինվորական հաշվառումից դուրս գալու հնարավորություն այլևս չի սահմանվում:

3. Զինվորական ծառայության նախապատրաստությունը

Զինվորական ծառայության նախապատրաստության հիմնական ուշադրությունը հատկացվում է հանրակրական դպրոցներին և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններին: Վերջիններում կազմակերպվում և անցկացվում է նախազորակոչային պատրաստություն՝ կառավարության սահմանած կարգով:

4. Պարտադիր գինվորական ծառայության գորակոչը

Զորակոչը խաղաղ պայմաններում պարտադիր գինվորական ծառայության ենթակա քաղաքացիների հավաքագրումն է:

Պարտադիր գինվորական ծառայության գորակոչի ենթակա են՝

- 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի ՀՀ քաղաքացիները,
- մինչև 35 տարեկան առաջին խճի պահեստագորի սպաները (օրինակ՝ «ըուժառաջության լեյտենանտ» գինվորական կոչում ունեցող՝ մասնագիտությամբ թժիշկ ՀՀ քաղաքացիները):

Բացառություն են կազմում պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջազգային և միջգերատեսչական համաձայնագրերով այլ պետությունների ասպիրանտուրայում սովորողները, ինչպես նաև դատական դպրոցի ունկնդիրները: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր գինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող գորակոչի ընթացքում (եթե, իհարկե, չեն պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը և չեն զբաղվում մասնագիտական, գիտական և մանկավարժական գործունեությամբ):

Ամեն դեպքում, գորակոչի ենթակա են միայն նրանք, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են գինվորական ծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում: Զինվորական ծառայությանը պիտանի, սահմանափակումներով պիտանի և ոչ պիտանի հիվանդությունների ցանկը սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարի 26.02.2010թ. N 175 հրամանով:

Զինվորական ծառայության գորակոչի ենթակա չեն ՀՀ այն քաղաքացիները՝

- որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն, նախաքննություն կամ դատաքննություն,
- որոնք նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս,
- որոնք կատարել են ՀՀ պաշտպանության նախարարի և գլխավոր դատախազի կողմից հաստատված ցանկում նշված հանցագործություն:

Շարքային կազմի գորակոչը (և գորացրումը) կատարվում է ՀՀ Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Պահեստագորի սպաների գորակոչը (և գորացրումը) կատարվում են ՀՀ Նախագահի հրամանագրով՝ տարին մեկ անգամ՝ հրամանագրում սահմանված ժամկետում:

5. Պարտադիր գինվորական ծառայությունից ազատվելը և ծառայության գորակոչի տարկետումը

Պարտադիր գինվորական ծառայությունից ազատվում է՝

- հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով գինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով գինվորական հաշվառումից,

- այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղայրը (քույրը) գոհվել (մահացել) է ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է,
- քաղաքացին ՀՀ կառավարության որոշմամբ,
- մինչև ՀՀ քաղաքացիությունն ընդունելու այլ պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին.
- գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա գրադադար է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

- ընտանեկան դրության բերումով,
- ուսումը շարունակելու համար,
- առողջական վիճակի պատճառով,
- այլ հիմքերով:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝

- անաշխատունակ հայր և մայր, կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր⁴, եթե նրանք չունեն ՀՀ քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ,
- առանց մոր մեծացող երեխա,
- երկու և ավելի երեխա,
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին,
- մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քոյլ կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ,
- կին, որն ունի 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամյա հղիություն,
- մինչև գորակոչային տարիքի հասնելու առնվազն հինգ տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն անուսնալուծվել են առնվազն հինգ տարի առաջ, և առկա են վերը նշված պայմաններից որևէ մեկը (օրինակ՝ ունի միայնակ անաշխատունակ հայր):

Ընտանեկան դրության բերումով քաղաքացուն կարող է տարկետում տրվել նաև վերը նշված հիմքերից դուրս (օրենքով չնախատեսված դեպքերում):

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է՝

- պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև ՀՀ կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին,
- պետական գիտակորթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմանը սովորողներին,
- պետական պատվերով, միջպետական և միջզերատեսչական համաձայնագրերով այլ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողներին,
- դատական դպրոցի ունկնդիրներին,
- հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողներին՝ մինչև նրանց 19 տարին լրանալը, եթե համապատասխան զինվորական կոմիսարիատ են ներկայացնում ուսումնական հաստատության պաշտոնատար անձի տված տեղեկանք՝ տվյալ ուսումնական հաստատությունում ուսումնառության վերաբերյալ

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով

⁴ Անաշխատունակ ծնողներ են՝ ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը, դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը:

տարկետում տրվում է Երկու կատեգորիայի քաղաքացիների՝

- ովքեր ունեն բուժման կարիք,
- ովքեր ժամանակավորապես պիտանի չեն զինվորական ծառայության համար:

Բուժման կարիք ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է 3 անգամ՝ մինչև 1 տարի ժամանակով։ Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով՝

- ✓ կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության,
- ✓ կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագորում,
- ✓ կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից։

Պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի զորակոչիկներին զորակոչից տարկետում տրվում է 1 անգամ՝ 3 տարի ժամանակով։ Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով՝

- ✓ կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության,
- ✓ կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագորում,
- ✓ կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից։

Ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած և 27 տարեկանից բարձր տարիքում ուսումն ավարտած զորակոչիկներին՝

- բուժման նպատակով տարկետում կարող է տրվել 1 անգամ՝ մինչև 6 ամիս ժամկետով,
- պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում՝ մինչև 1 տարի ժամկետով։

6. Զինվորական ծառայությունը

Զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հասուկ տեսակ է։

Զինվորական ծառայությունը բաղկացած է՝

- ժամկետային զինվորական ծառայությունից,
- պահեստագորային զինվորական ծառայությունից։

Ժամկետային զինվորական ծառայությունն էլ իր հերթին բաղկացած է՝

- ✓ պարտադիր զինվորական ծառայությունից,
- ✓ պայմանագրային զինվորական ծառայությունից։

7. Պահեստագորում գտնվելը

Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար։

8. ՀՀ Երկրադարձիների զինապարտությունը

ՀՀ Երկրադարձիները պետք է կատարեն Հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու իրենց սահմանադրական պարտականությունը։ Նրանք կարող են այն կատարել ինչպես պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու, այնպես էլ կամավոր հիմունքներով՝ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու միջոցով։

Վերոնշյալը տարածվում է նաև 1995թ. հունվարի 1-ից հետո՝

- առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու՝ այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունից միակողմանի հրաժարված ՀՀ քաղաքացիների վրա։

9. Երկրադարձիների պարտադիր զինվորական ծառայությունը

Եթե այլ պետության քաղաքացին ընդունում է ՀՀ քաղաքացիություն, ապա նա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը՝

- ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ

- այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային գինվորական ծառայություն՝ բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած պետությունների⁵:

Եթե ՀՀ քաղաքացին ընդունում է այլ պետության քաղաքացիություն, ապա նա չի ազատվում պարտադիր գինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե՝ ոչ:

Երկրադագին չի ազատվում գորահավաքներից և վարժական հավաքներից:

10. Հավելյալ տեղեկություններ

Պարտադիր գինվորական ծառայության գորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

- միայնակ և տարիքային կենսարոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը,
- ՀՀ սահմաների պաշտպանության, գինված ուժերում և այլ գորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով Հայաստանում տեղակայված օտարերկրյա պետությունների գինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (նահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող գորակոչիկները,
- անուսնացած և մեկ երեխա ունեցող գորակոչիկները,
- երկողուն և միակողուն ծնողազուրկ գորակոչիկները,
- ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ այլ գորակոչիկները:

Բնակության վայրին մոտ գտնվող գորամաս է համարվում գորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 100 կմ տեղակայված գորամասը:

Միաժամանակ գորակոչող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են գորակոչվում միևնույն գորամաս:

Բ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՎՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ քաղաքացիները կարող են ՀՀ պաշտպանությանը մասնակցել նաև այլընտրանքային ծառայություն անցնելով: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այլընտրանքային ծառայություն կարող են անցնել ՀՀ այն քաղաքացիները, որոնց կրոնական դավանանքին կամ հանողունքներին հակասում են՝

- ռազմական ստորաբաժանումներում գինվորական ծառայություն անցնելը,
- ծառայության ընթացքում զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը:

Այլընտրանքային ծառայության տեսակները և ժամկետներն են՝

- այլընտրանքային գինվորական ծառայություն՝ 36 ամիս,
- այլընտրանքային աշխատանքային ծառայություն՝ 42 ամիս:

Այլընտրանքային գինվորական ծառայությունն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության գորամասերի առանձնացված ստորաբաժանումներում, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությունն իրականացվում է ՀՀ գինված ուժերից դուրս՝ ՀՀ առողջապահության նախարարության ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգերի կազմակերպություններում:

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչև հերթական գորակոչին նախորդող մարտի 1-ը կամ սեպտեմբերի 1-ը դիմում է ներկայացրել իր բնակության վայրի գինվորական կոմիսարիատ:

Այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները չեն կարող օրենքով սահմանված կարգով զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու իրավունք ստանալ:

Այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիները չեն կարող նշանակվել այնպիսի պետական պաշտոնների, որոնց վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ:

Գ. ՍԱՐՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՄԱՄՔ ՊԱՐՏՄԱՀԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՑՆԵՐԻՆ ՊԱՍՍԽԱՆՍԱՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր գինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը: Օրենքի նպատակն է 1992թ. աշնանային գորակոչից մինչև 2011թ. մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում գինվորական ծառայություն չանցած քաղաքացիներից պարտադիր վճար մուտքելու դիմաց՝ ազատել նրանց

⁵ Այդ ցանկը ՀՀ կառավարության կողմից դեռևս սահմանված չէ:

քրեական հետապնդումից, հաշվառել պահեստագորում և տրամադրել զինվորական գրքույկ:

1. Օրենքի գործողության ոլորտը

Օրենքի կարգավորումը տարածվում է Երկու խումբ անձանց վրա՝

- անձինք, ում 27 (իսկ պահեստագորի սպաները՝ 35) տարին լրացել է մինչև 2011թ. մայիսի 1-ը և նրանք սահմանված կարգի խախտմամբ չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն (խուսափել են ծառայությունից),
- անձինք, ում 27 (իսկ պահեստագորի սպաները՝ 35) տարին չի լրացել, սակայն մինչև 2011թ. մայիսի 1-ը նրանք ծեռք են բերել զինվորական ծառայությունից ազատման կամ գորակոչից տարկետման հիմք (գիտությունների թեկնածու, դոկտոր, երկու երեխա և այլն):

Զինվորական ծառայություն չանցնելը հավասարագոր է դրանից խուսափելուն՝ անկախ այն համագումանքից, թե անձը ենթարկվել է զինվորական հաշվառման, թե՝ ոչ, ստացել է սահմանված կարգով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագիր, թե՝ ոչ, և այլն:

2. Պարտադիր վճարների չափերը

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները, պարտադիր զինվորական ծառայության գորակոչին օրենքի խախտմամբ չներկայանալու պահից սկսած՝ *յուրաքանչյուր չգորակոչված* (խուսափած) գորակոչի դիմաց կարող են մուտքել վճարներ՝ հետևյալ դրույթաչափերով.

Պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դեպքերը	Պատասխանատվությունից ազատվելու համար կատարվող վճարների չափերը՝ յուրաքանչյուր չգորակոչված (խուսափած) գորակոչի դիմաց (ՀՀԴ)
1. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և 27 տարին լրացած զինապարտ քաղաքացիները	100.000
2. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքեր ծեռք բերած զինապարտ այն քաղաքացին՝ 1) ով հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինծառայության համար ոչ պիտանի՝ հանվելով զինվորական հաշվառմանից 2) ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) մահացել (զոհվել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է՝ անկախ 27 տարին լրանալու հանգամանքից 3) ով ունի գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) և զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ	30.000 0 50.000
3. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից ուսումն շարունակելու համար տարկետում ստացած զինապարտ քաղաքացիները	50.000
4. Պարտադիր զինվորական ծառայություն	30.000

<p>չանցած և հետագայում ընտանեկան դրության բերմամբ տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած այն քաղաքացիները, ովքեր ունեն՝</p> <p>1) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ (անաշխատունակ ծնողներ են՝</p> <ul style="list-style-type: none"> - ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը, - առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը, - դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը) <p>2) առանց մոր մեծացող երեխա.</p> <p>3) երկու երեխա.</p> <p>4) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.</p> <p>5) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քոյր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ.</p> <p>6) երկրորդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամյա հղության շրջանում գտնվող կին.</p> <p>7) օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերմամբ տարկետում ստանալու իրավունք</p>	
<p>5. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում 3 ու ավելի երեխա կամ առանց մոր մեծացող 2 երեխա ունեցողները՝ անկախ 27 տարին լրանալու հանգամանքից</p>	0
<p>6. Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունք ստանալու հիմք ձեռք բերած զինապարտ քաղաքացիները</p>	30.000

3. Դիմումները ներկայացնելու, բննարկելու կարգն ու ժամանակացույցը

Այլ պետությունում գտնվող քաղաքացին դիմումը կարող է՝

- անձամբ ներկայացնել տվյալ պետությունում ՀՀ դիվանագիտական մարմին (հյուպատոսական հիմնարկ) կամ
- իր օրինական ներկայացուցչի (ծնող, լիազորված անձ) միջոցով ներկայացնել համապատասխան զինվորական կոմիսարիատ:

Զինվորական կոմիսարիատում տրամադրվում է դիմումի ձևը, որի կցվում են հետևյալ փաստաթղթեր՝

- ա) ծննդյան վկայականի և անձնագրի պատճենները,
- բ) բնակության (հաշվառման) վայրի մասին տեղեկանք,
- գ) ընտանիքի կազմի մասին տեղեկանք,
- դ) պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու

իրավունք տվող հիմքերը:

Քաղաքացու դիմումը քննարկելու և դրան պատասխանելու ժամկետը չի կարող գերազանցել 2 ամիսը:

Քաղաքացու դիմումի վերաբերյալ դրական որոշում ընդունվելու դեպքում դիմողին ուղարկվում է պատասխան գրություն, որում նշվում են օրենքով սահմանված վճարը մուտքելու համար բանկային հաշվի համարը, վճարը մուտքելու վերջնական ժամկետը, համապատասխան անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ: Պատասխան գրությունում նշված ժամկետում վճարը չի ընդունվում:

Դիմումի պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացին իրավունք ունի պատասխանն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում դա բողոքարկել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4. Վճար մուտքելը

Դիմումի պատասխանն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում վճարները մուտքում են բանկային համակարգի միջոցով: Այդ վճարները մուտքագրվում են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այդ նպատակով բացված հատուկ հաշվում և օգտագործվում են ռազմական կարիքների բավարարման համար:

5. Հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը և պահեստազորում հաշվառելը

Քաղաքացուն, սահմանված վճարը մուտքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տրվում է իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դադարեցման մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը:

Սահմանված վճարը մուծած քաղաքացին հաշվառվում է պահեստազորում և ստանում է զինվորական գրքույկ: Իր կարգավիճակով նա չի տարբերվում պահեստազորում հաշվառված մյուս զինապարտներից:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել՝
ՀՀ Զինվորական կոմիսարիատ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Բաբայան 6

Հեռախոս՝ (+374 10) 201308 կամ

ՀՀ ՊՆ առընթեր Հասարակական խորհուրդ՝

ՀՀ, ք. Երևան, 0001, Սոսկովյան 5

Հեռախոս՝ (+374 10) 52-34-86, 52-34-82

ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական վեբ կայքը՝ <http://www.mil.am>

Դ. ՀԱՅԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ պետք է անի ՀՀ քաղաքացին, եթե նրան չեն գորակոչում

Քաղաքացին պարտավոր է 18 տարեկան դարնալուց հետո մինչև 27 տարեկան դարնալն ինքնուրույն ներկայանալ հաշվառման վայրի զինկոմիսարիատ և ճշտել, թե ինչու իրեն չեն կանչում զինծառայության: Անգործությունը նույնականացնելու համար դադարեցման համար գործությունը կատարվում է որպես զինծառայությունից խուսափում:

2. Ի՞նչ պետք է անի ՀՀ քաղաքացին, եթե լրացել է նրա 18 տարին և նա չունի անձնագիր

Քաղաքացին պարտավոր է զինվորական հաշվառման համար ներկայանալ իր հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատը (դիվանագիտական մարմին, հյուպատոսական հիմնարկ): Զինվորական հաշվառման վերաբերյալ տեղեկանքի հիման վրա քաղաքացին կարող է ստանալ անձնագիր:

3. Ի՞նչ պետք է անի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած և 27 տարին չլրացած ՀՀ քաղաքացին, եթե նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում

Քաղաքացին պարտավոր է ներկայանալ իր հաշվառման վայրի (կամ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատ կամ իրավապահական մարմին: Զինվորական կոմիսարիատը և իրավապահ մարմինը զինծառայությանը պիտանիության հարցը որոշելու համար ծեռնարկում են միջոցներ և քաղաքացուն ներկայացնում զորակոչային հանձնաժողովը: Եթե զորակոչային հանձնաժողովը կայացնում է քաղաքացուն զորակոչելու մասին որոշում, ապա իրավապահ մարմնի կողմից, օրենքով սահմանված կարգով, դադարեցվում է քրեական հետապնդումը և քաղաքացին զորակոչվում է բանակ՝ առանց հետազոտում որևէ բացասական իրավական հետևանքի:

Իսկ այն դեպքում, եթե պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած և 27 տարին

Հրացած քաղաքացին մինչև 2011թ. մայիսի 1-ը ձեռք է բերել գինվորական ծառայությունից ազատվելու հիմք (օրինակ՝ դարձել է գիտությունների դոկտոր), կամ ունի զրակոչից տարկետում ստանալու հիմք (օրինակ՝ ծնվել է նրա երկրորդ երեխան), նա կարող է պետական բյուջե մուտքել օրենքով սահմանված կոնկրետ վճարներ, որի արդյունքում կդադարեցվի քրեական հետապնդումը, նա կհաշվառվի ՀՀ գինված ուժերի պահեստագորում և կստանա գինվորական գրքույկ (տես՝ սույն Բաժնի Գ պարագրաֆը):

4. Պարտադիր գինվորական ծառայությունից խուսափած քաղաքացին կարո՞ղ է պետական բյուջե համապատասխան վճարները մուտքել միջնորդավորված եղանակով՝ առանց նախապես Հայաստան վերադառնալու

Այո՛, գինվորական ծառայությունից խուսափած քաղաքացին կարող է ցանկացած անձի նոտարական կարգով լիազորել՝ իր անունից հանդես գալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ներկայացնելու դիմումներ, ինչպես նաև կատարելու վճարներ: Ավելին, նա կարող է լիազորել նույն անձին՝ ստանալու իր գինվորական գրքույկը: Խուսափած քաղաքացու անունից կարող է հանդես գալ նաև նրա ծնողը, որդեգրողը կամ խնամակալը՝ առանց որևէ լիազորագրի (ամեն դեպքում լիազորագրի առկայությունը պարտադիր է լինելու գինվորական գրքույկը ստանալու ժամանակ):

Ստացվում է, որ խուսափած քաղաքացու համար նախապես Հայաստան վերադառնալը պարտադիր չէ. նա կարող է վերադառնալ քրեական հետապնդումը դադարեցվելուց, գինվորական հաշվառման վերցվելուց և գինվորական գրքույկը միջնորդավորված ստանալուց հետո:

5. Կարո՞ղ է 18 տարին լրացած ՀՀ քաղաքացին վճար մուտքել պետական բյուջե և ընդհանրապես ազատվել պարտադիր գինվորական ծառայությունից

Ո՛չ, վճար մուտքելու միջոցով պարտադիր գինվորական ծառայությունից ազատվելու հնարավորություն ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում: 18 տարին լրացած արական սեռի յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի պարտավոր է ծառայել Հայկական բանակում՝ օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ
ԳՈՐԾԵԼԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼԸ ԵՎ ԲՆԱԿՎԵԼԸ, ԵԼՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ

«Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող
յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում
ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք»
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 25 (1))

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ

Օտարերկրացիները ՀՀ մուտք են գործում պետական սահմանի անցման կետերով՝ վավերական անձնագրի առկայության և ՀՀ կառավարության առնվեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի թույլտվության դեպքում որպես կանոն՝

- մուտքի վիզայի կամ
- կացության կարգավիճակը հավաստող փաստաթղի հիման վրա (տես՝ սույն Բաժնի Բ պարագրաֆը):

Անչափահաս օտարերկրացիները (մինչև 18 տարեկանները) ՀՀ մուտք են գործում իրենց օրինական ներկայացուցչի (ծնող, որդեգորող, խնամակալ) կամ ուղեկցողի հետ միասին: Նրանք կարող են ՀՀ մուտք գործել նաև միայնակ, եթե գալիս են ՀՀ իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, կամ այլ օրինական ներկայացուցչի մոտ:

Առանց մուտքի վիզայի ՀՀ տարածք կարող են մուտք գործել հետևյալ պետությունների՝ քաղաքացիները՝

1. Ռուսաստան
2. Ուկրաինա
3. Բելառուս
4. Վրաստան
5. Ուզբեկստան
6. Տաջիկստան
7. Ղրղզստան
8. Ղազախստան
9. Մոլդովա

Նշված 9 պետությունների քաղաքացիները ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում: Լրացնելով ժամկետով ՀՀ տարածքում գտնվելու համար նրանք պետք է ստանան կացության կարգավիճակ (տես՝ սույն Բաժնի Բ պարագրաֆը):

1. Մուտքի վիզայի տեսակները

ՀՀ մուտքի վիզայի տեսակներն են՝

- այցելության վիզա (Ա/Վ).
- պաշտոնական վիզա (Պ/Օ).
- դիվանագիտական վիզա (Դ/Դ).
- տարանցիկ վիզա (Տ/Տ):

Այցելության մուտքի վիզամ⁶ իրավունք է վերապահում օտարերկրացուն մուտք գործել ՀՀ և մնալ երկրում մինչև 120 օր: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել:

Այցելության վիզամ տրվում է, երբ օտարերկրացին ցանկանում է մուտք գործել ՀՀ տարածք՝ գրուաշրջության, ազգականներին կամ այլ անձանց այցելելու, գործնական, ուղևորաբեռնափոխադրման կամ այլ մասնագիտական հետաքրքրությունների, բուժման կամ այլ կարճաժամկետ կեցության նպատակով:

2. Մուտքի վիզայի տրամադրումը

⁶ Այցելության, ինչպես նաև մուտքի վիզայի մյուս տեսակների (պաշտոնական, դիվանագիտական և տարանցիկ վիզաների) վերաբերյալ նաև անդամանությունների համար, տես՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ կայքը՝ <http://www.mfa.am>:

Մուտքի վիզան տրամադրվում է՝

- այլ պետությունում՝ ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների կողմից.
- ՀՀ պետական սահմանի անցման կետերում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժնան կողմից.
- Էլեկտրոնային եղանակով (Էլեկտրոնային վիզա՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից):

3. Մուտքի վիզա ստանալու կարգը

Օտարերկրացին մուտքի վիզա ստանալու համար ներկայացնում է՝

- 1) անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ⁷ (որա վավերականության ժամկետը պետք է լինի առնվազն մեկ ամսով ավելի, քան հայցվող վիզայի վավերականությունը),
- 2) անգլերենով կամ հայերենով լրացված դիմում-հարցաթերթիկ.
- 3) 35 x 45 մմ չափսի գունավոր 1 լուսանկար,
- 4) մինչև 18 տարեկան օտարերկրացին՝ նաև ծնողների (կամ ծնողներից որևէ մեկի), այլ օրինական ներկայացուցչի, ուղեկցողի հետ միասին այցելելու կամ միայնակ, ՀՀ-ում գտնվող ծնողների կամ ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի նոտ կամ ընդունող կազմակերպություն այցելությունը հավաստող փաստաթուղթ (ծնողների, ծնողներից որևէ մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված դիմում կամ ընդունող կազմակերպության ներկայացրած միջնորդագիր),
- 5) հրավեր (եթե պահանջվում է),
- 6) պետական տուրքի վճարման անդորրագիր՝ ըստ սահմանված սակագների (տես՝ Հավելված 6):

Որպես կանոն, ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում մուտքի վիզան տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում (եթե չի պահանջվում փաստաթղթերի ստուգման անհրաժեշտություն):

Էլեկտրոնային վիզա ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ արտաքին գործերի նախարարության <http://www.mfa.am/eVisa> վեր կայքը:

4. Մուտքի վիզայի ժամկետի երկարաձգումը

ՀՀ մուտքի վիզայի (նաև էլեկտրոնային վիզայի) ժամկետը երկարաձգվում է միայն ՀՀ տարածքում: Ժամկետի երկարաձգման համար օտարերկրացին առավելագույնը 15 օր առաջ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, և դիմում-հարցաթերթիկը: 2 աշխատանքային օրվա ընթացքում վիզայի ժամկետը կամ երկարաձգվում է, կամ օտարերկրացու դիմումը մերժում է:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է այն պետությունների ցանկը, որոնց քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն տվյալ պետության (իսկ եթե այդ պետությունում չկա, ապա ամենամոտ կամ ամենահարուստ) ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն, այն էլ միայն հրավերի հիման վրա:

- Այդ երկրներն են՝
1. Աֆղանստան
 2. Բանգլադեշ
 3. Կամերուն
 4. Եգիպտոս
 5. Իրաք
 6. Լիբերի
 7. Լիզերիա
 8. Պակիստան
 9. Սաուդիա Արաբիա
 10. Սոմալի

⁷ ճամփորդական փաստաթուղթը միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող փաստաթուղթ է, որը տրվում է այլ պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը:

⁸ Դիմում-հարցաթերթիկն կարելի է ժամորանալ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեր կայքից՝ <http://www.mfa.am> («Հյուպատոսական ժառանյութ/Վիզա (մուտքի արտոնագիր)» բաժնում):

11. Շրի Լանկա
12. Սուլդան
13. Սիրիա
14. Վիետնամ
15. Նեպալ
16. Պաղեստին
17. Կոտ դ'Իվուար
18. Գանա
19. Սիեռա Լեոնե
20. Ալժիր
21. Սարոկո
22. Լիբիա
23. Սավիրիտանիա
24. Թունիս

Նշված պետությունների քաղաքացիները չեն կարող ստանալ էլեկտրոնային վիզա:

Չինաստանի և Հնդկաստանի քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա ստանում են միայն ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում, սակայն 2011 թվականից նրանց համար հրավերը պարտադիր չէ:

Վերը նշված 24 պետությունների՝ ազգությամբ հայ (հայկական ծագում ունեցող) քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա պետության ազգությամբ հայ քաղաքացիների մերձավոր ազգականները (ծնող, եղբայր, քույր, ամուսին, զավակ, տատ, պապ, թոռ)՝ ՀՀ մուտքի վիզա ստանում են առանց հրավերի:

Օտարերկրացու հայկական ծագումը հաստատվում է տվյալ պետությունում կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերով: Մերձավոր ազգականների անմիջական ազգակցությունն ապացուցվում է պաշտոնական փաստաթղթերով:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով ՀՀ-ում օտարերկրացիների գտնվելու և բնակվելու համար սահմանված է կացության երեք կարգավիճակ.

- Ժամանակավոր,
- մշտական և
- հատուկ:

Նշված կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերում են համապատասխանաբար՝

- Ժամանակավոր կացության քարտը,
- մշտական կացության քարտը և
- հատուկ անձնագիրը:

1. Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու հիմքերը

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունի ՀՀ-ում մեկ տարի և ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հետևյալ հանգամանքներից որևէ մեկը՝

- ուսումը,
- աշխատանքի թույլտվության առկայությունը,
- ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում օրինական կարգով բնակվող օտարերկրացու հետ ամուսնությունը,
- ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու մերձավոր ազգականը (ծնող, եղբայր, քույր, ամուսին, զավակ, տատ, պապ, թոռ) լինելը,
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- ազգությամբ հայ լինելը:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

ապացուցում է ՀՀ-ում՝ ՀՀ քաղաքացի համդիսացող (կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող) անուսնու կամ իր մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և առնվազն երեք տարի օրինական բնակվել է ՀՀ-ում, կամ

- ՀՀ-ում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, կամ
- ազգությամբ հայ է:

2. Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու ժամկետները

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:

Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակի ժամկետը երկարաձգելու դիմումը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն պետք է ներկայացվի համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:

3. Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստանալու կարգը

Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացվում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

Ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու կամ մերժելու մասին որոշում կայացնում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ դիմումը ներկայացնելու օրվանից 30-օրյա ժամկետում:

Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) համար օտարերկրացիները ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ներկայացնում են՝

- 1) դիմում,
- 2) 35 x 45 մմ չափսի գունավոր երեք լուսանկար,
- 3) անձնագիր, անձնագրի պատճեն և անձնագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանություն,
- 4) ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր,
- 5) առողջական վիճակի մասին տեղեկանք,
- 6) պետական տուրքի վճարման անդորրագիրը (տես՝ Հավելված 8):

Ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու համար նշված հիմքերով դիմումը օտարերկրացիները չեն ներկայացնում անձնագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրացու անձնագիրն այդ ժամանակահատվածում փոխանակվել է:

Փաստաթղթերը ներկայացնելիս օտարերկրացին լրացնում է դիմում-հարցաթերթիկ (տես՝ Հավելված 7):

4. Հատուկ կացության կարգավիճակ տալու հիմքերը

Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել այն օտարերկրացիներին, ովքեր՝

- ազգությամբ հայ են,
- ՀՀ-ում ծավալում են տնտեսական կամ մշակութային գործունեություն:

5. Հատուկ կացության կարգավիճակ տալու ժամկետները և կարգը

Հատուկ կացության կարգավիճակ տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ՀՀ տարածքում ներկայացվում է

ՀՅ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, իսկ այլ պետությունում՝ ՀՅ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար օտարերկրացին անձամբ կամ պատվիրված փոստով ՀՅ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՅ Նախագահին ուղղված դիմում-հարցաթերթիկ,
- ՀՅ դիվանագիտական (հյուպատոսական) ներկայացուցչության ղեկավարին ուղղված նամակ (որում ներկայացվում են, կենսագրական տվյալներ, անձնական այլ տեղեկություններ),
- Երկու նամակ-երաշխավորագիր համայնքային գործող կառույցներից կամ զգալի ներդրում ունեցող և ճանաչված անհատներից (ՀՅ-ում կամ այլ պետությունում),
- անձնագրի պատճեն (լուսանկարով),
- ծննդյան վկայականի կամ փոխարինող փաստաթղթի պատճեն,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- պետական տուրքի վճարման անդրդրագրի:

Հատուկ կացության կարգավիճակ տալու կամ մերժելու որոշումը կայացնում է ՀՅ Նախագահը: Այդ որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման

6. ՀՅ-ում գտնվելու տարանցիկ երթևեկության ժամանակ

Տարանցիկ երթևեկության (այսինքն՝ մի պետությունից մեկ այլ պետություն ՀՅ տարածքով երթևեկության) դեպքում օտարերկրացիները կարող են մնալ ՀՅ տարածքում, եթե ներկայացնում են ուղետոմսը կամ այցելող պետության մուտքի վիզան: Այս դեպքում նրանք ՀՅ-ում կարող են գտնվել 72 ժամից ոչ ավել:

Եթե օտարերկրացին գտնվում է տարանցիկ գոտում և չի մտնելու ՀՅ տարածք, ապա նա կարող է գտնվել տարանցիկ գոտում 48 ժամից ոչ ավել:

Նշված ժամկետները կարող են երկարաձգվել արտակարգ իրավիճակի դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Հատուկ կացության կարգավիճակ ստանալու կարգի վերաբերյալ մանրանասնություններին (այդ թվում՝ դիմում-հարցաթերթիկի, նամակի ձևերին) կարելի է ծանոթանալ ՀՅ արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ կայքից՝ <http://www.armeniaforeignministry.com> («Հյուպատոսական ծառայություն/Հատուկ կացության կարգավիճակ» բաժնում):

Պետական տուրքի վերաբերյալ տես Հավելված 8-ը (վճարի չափը տարադրամով ինանալու համար խորհուրդ է տրվում կապվել համապատասխան դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության հետ):

Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԻ ԿԱՐԳԸ

Օտարերկրացիները ՀՅ-ից կարող են դուրս գալ վավերական անձնագրի և ՀՅ-ում գտնվելու կամ բնակվելու օրինականությունը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

ՀՅ-ից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե՝

- նա մեղադրվում է հանցագործության մեջ և նրա նկատմամբ կայացվել է որոշում՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին,
- նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն ՀՅ-ում:

Դ. ՀԱԲԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր դեպքերում չի թույլատրվում օտարերկրացիների մուտքը ՀՅ տարածք

Օտարերկրացիները չեն կարող ՀՅ տարածք մուտք գործել, եթե՝

- չունեն անձնագրի, որան փոխարինող փաստաթուղթ,
- անվավեր անձնագրով են ժամանել ՀՅ պետական սահմանի անցման կետ,
- ՀՅ պետական սահմանի անցման կետում ստացել են մուտքի վիզայի մերժում, կամ
- սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից չեն ստացել մուտքի թույլտվություն:

2. Ի՞նչ կիմքով կարող է մերժվել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը

Որպես ընդհանուր կամոն, օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝

- նա արտաքսվել է ՀՀ տարածքից կամ նախկինում գրկվել է կացության կարգավիճակից (և եթե արտաքսման կամ կացության կարգավիճակից գրկելու մասին որոշումից անցել է 3 տարուց պակաս ժամկետ),
- նա դատապարտվել է ՀՀ-ում՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար,
- գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա ցանկանում է վնաս պատճառել ՀՀ պետական անվտանգությանը, սահմանադրական կարգին, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, մարդկանց առևտուր (թրաֆիքինգ) և այլն,
- նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը,
- կացության կարգավիճակ ստանալու համար նա ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր:

4. Օտարերկրացին ի՞նչ կարգով կարող է բողոքարկել կացության կարգավիճակ ստանալու դիմումի մերժումը

Բացառությամբ հատուկ կացության կարգավիճակի, կացության կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու համար ներկայացված դիմումի մերժումը օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

5. Կացության կարգավիճակ ստանալու դիմումի մերժման դեպքում որքա՞ն ժամանակ անց օտարերկրացին կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար

Կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին մեկ տարի հետո կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար:

6. Ովքե՞ր կարող են օտարերկրացուն տալ ՀՀ այցելության հրավեր

Օտարերկրացուն ՀՀ այցելության հրավեր կարող են տալ՝

- ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիները,
- ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները,
- ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք,
- ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկները, միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները:

ԲԱԺԻՆ 8

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Սահմանադրությամբ՝ ՀՀ-ում երաշխավորվում է ինչպես ՀՀ, այնպես էլ այլ պետության քաղաքացիների կրթության իրավունքը: ՀՀ և այլ պետության քաղաքացիներին հնարավորություն է տրվում ՀՀ ուսումնական հաստատություններում և գիտական, գիտակրթական և գիտահետազոտական հիմնարկներում կրթություն ստանալ՝ անկախ նրանց ազգությունից, ռասայից, սեռից, տարիքից, լեզվից, կրոնից կամ դավանանքից, այլ հանգանակներից:

Ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո նրանց տրվում է ՀՀ-ում սահմանված ձևի դիպլոմ (վկայական):

Պետությունը ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկրադարձիների, համար երաշխավորվում է պետական ուսումնական հաստատություններում՝

- անվճար ընդհանուր միջնակարգ կրթություն,
- մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթություն:

ՀՀ-ում սպորտող բոլոր օտարերկրացիներն օգտվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքներից ու ազտություններից և կրում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որոշակի պարտավորություններից:

ՀՀ-ում իրականացվող կրթական ծրագրերն են՝

- 1) հանրակրթական ծրագրերը (հիմնական և լրացուցիչ),
- 2) մասնագիտական կրթական ծրագրերը (հիմնական և լրացուցիչ):

ՀՀ-ում օտարերկրացիները կարող են կրթություն ստանալ՝

- 1) միջնակարգ հանրակրթական դպրոցներում,
- 2) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում
- 3) բարձրագույն ուսումնական հաստատություններում
- 4) բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական հիմնարկների ասպիրանտուրայում:

Նրանք կարող են նաև բարձրացնել իրենց գիտական և մանկավարժական որակավորումը բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական հիմնարկներում, որակավորման բարձրացման ֆակուլտետներում և դասընթացներում, կլինիկական օրդինատուրայում:

Ուսումնական հաստատությունները լինում են՝

- 1) նախադպրոցական,
- 2) հանրակրթական,
- 3) նախնական մասնագիտական (արհեստագործական),
- 4) միջին մասնագիտական,
- 5) բարձրագույն մասնագիտական,
- 6) լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության,
- 7) հետրուհական մասնագիտական կրթության:

Կրթության բնագավառում միջազգային համագործակցությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերին հանապատասխան:

ՀՀ-ն 1995թ. մայիսից Բոլոնիայի գործընթացի անդամ երկիր է:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ կրթական համակարգի, Բոլոնիայի գործընթացի և կրթությանը վերաբերող այլ տեղեկատվությունների այցելել ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական վեբ կայքը՝ <http://www.edu.am>:

Բ. ԴԱՍՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարպելակերպի ձևավորումը:

ՀՀ-ում պարտադիր է հիմնական ընդհանուր կրթությունը: Հիմնական ընդհանուր կրթության

պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուների) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը:

Պետական հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների աշակերտներին պետությունը, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով, բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

Արտակարգ ընդունակություններ դրսերած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն:

1. Միջնակարգ կրթությունը և դրա տևողությունը

Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով:

- 1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)
- 2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)
- 3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)

Ընդհանուր կրթությունն սկսվում է վեց տարեկանից:

2. Հանրակրթական ծրագրերը

Հանրակրթական ծրագրերը նպատակառությամբ են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

ՀՀ-ում հանրակրթական հիմնական ծրագրերն են՝

- 1) նախադպրոցականը,
- 2) տարրականը (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- 3) հիմնականը (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- 4) միջնակարգը (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ):

Հանրակրթական ծրագրերն իրականացվում են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից:

Նախորդ կրթական ծրագրից (բացի նախադպրոցականից) յուրացմելու դեպքում սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթական ուսուցման հաջորդ աստիճանին:

3. Հանրակրթական դպրոց ընդունելության պայմանները

Հանրակրթական դպրոց ընդունելության համար երեխայի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) դպրոց է ներկայացնում՝

ա) դիմում, իսկ առաջին դասարան ընդունվելիս նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք,

- բ) 3x4 չափսի 2 լուսանկար.
- գ) երեխայի ծննդյան վկայականի պատճենը, իսկ առաջին դասարան ընդունվելիս՝ ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը⁹.
- դ) դպրոցից դպրոց սովորողի փոխադրման թերթիկը (բացառությամբ հիմնական դպրոցից առանձին գործող ավագ դպրոց ընդունվելիս),
- զ) սովորողի անձնական գործը (առաջինից բարձր դասարաններ ընդունվելու համար):

4. Օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց երեխաների ուսուցման լեզուն և առանձնահատկությունը

ՀՀ-ում ուսումն ընդհատած և ՀՀ-ից արտերկիր տեղափոխված ու վերադարձած սովորողը ՀՀ-ում ուսումն շարունակում է իր տարիքային խմբին համապատասխան դասարանում՝ ներկայացնելով վերը նշված փաստաթղթերը:

Օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց երեխաների ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները):

Այլ պետություններում ուսերենով (կամ այլ օտար լեզվով) ուսուցմանը դպրոցներում (1-ին և 2-րդ դասարաններում) սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ՀՀ վերադառնալիս ուսումն

⁹ Պատճենը, տնօրենի «Խսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ, պահպում է սովորողի անձնական գործում:

շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում:

Այլ պետության քաղաքացիները կարող են ՀՀ բուհ ընդունվելու համար դիմել ընդիանուր հիմունքներով:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

- Մինչև 2006թ. ընդունված աշակերտները սովորում են 11 տարի, իսկ 2006թ. սկսած գործում է 12-ամյա կրթությունը:
- Կրթությունը պետական դպրոցներում անվճար է:
- Մասնավոր (վճարովի) դպրոցներում ուսուցումն իրականացվում է պետական կրթական չափորոշիչների համաձայն:
- Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, ավարտվում՝ հունիս ամսին:

Գ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

1. Մասնագիտական ծրագրերը

ՀՀ-ում մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- 1) նախնական մասնագիտականը (արհեստագործական).
- 2) միջին մասնագիտականը.
- 3) բարձրագույն մասնագիտականը.
- 4) հետքուհական մասնագիտականը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը ընդիանուր կրթության հիման վրա նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Այն իրականացվում է՝

- արհեստագործական ուսումնարաններում,
- քոլեջներում,
- այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում,
- ուսումնական կենտրոններում,
- քրեակատարողական հիմնարկներում,
- համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ:

Ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «արհեստավոր» որակավորման աստիճան:

Միջին մասնագիտական կրթության նպատակն առնվազն հիմնական ընդիանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Այն իրականացվում է քոլեջներում և ուսումնարաններում:

Ուսուցման տևողությունը, կախված ուսանողի հիմնական կրթության աստիճանից և ընտրված մասնագիտությունից, 2 տարուց մինչև 5 տարի է: Շրջանավարտներին շնորհվում է «մասնագետ» որակավորման աստիճան:

Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կաղորերի պատրաստումն ու վերառուակավորումն է:

ՀՀ-ում սահմանված են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

- 1) բակալավր.
- 2) դիպլոմավորված մասնագետ.
- 3) մագիստրոս:

ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատությունների տարատեսակներն են՝ համալսարանը, ինստիտուտը, ակադեմիան և կոնսերվատորիան:

Հետքուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է:

Հետքուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով:

Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տևողությունն է՝

- 1) բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 4 տարի, ոստիկանական մասնագիտությունների համար՝ առնվազն 3 տարի.
- 2) դիպունավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարի, արվեստի և ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների համար՝ առնվազն 4 տարի.
- 3) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարի, բժշկական մասնագիտությունների համար՝ մինչև 4 տարի,
- 4) հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 3 տարի:

ՀՅ քաղաքացիներն ու այլ պետության քաղաքացիները բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթություն կարող են ստանալ բարձրագույն և հետքուհական հիմնական (ու լրացրցից) կրթական ծրագրերով՝ ուսուցման առկա, հեռակա և հեռավոր (դիստանցիոն) ձևերով:

Մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրացիների համար ուսումը վճարովի է (բացառությամբ ազգությամբ հայերի, որոնց համար պետությունը նախատեսում է սահմանափակ թվով անվճար տեղեր պետական ուսումնական հաստատություններում):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Զավախիք ու Քվեմո-Քարթլի նահանգների՝ ազգությամբ հայ բնակիչների համար, ովքեր ՀՅ-ում սովորում են վճարովի համակարգում, չեն կարող կիրառվել ուսման ավելի բարձր վարձավճար, քան սահմանված է ՀՅ քաղաքացիների համար:

Վճարների չափերի և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություններ:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Հայաստանում այսօր գործում են 18 պետական համալսարաններ, որոնցից 8-ը միջազգային կառավարմանք, և ավելի քան 20 մասնավոր համալսարաններ: Հայաստանի համալսարաններում ուսում են առնում հազարավոր օտարերկրացի ուսանողներ, և ասպիրանտներ: Կրթության բնագավառների մասին մանրամասն տեղեկատվություններ կարելի է ստանալ համալսարանների պաշտոնական վեբ կայքերից:

Հայաստանի պետական և ոչ պետական համալսարանների ամբողջական ցանկը գետեղված է հետևյալ վեբ կայքում՝ <http://www.armenic.am> («Կրթությունը Հայաստանում/Համալսարաններ» բաժնում):

2. Մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու պայմանները

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ կարող են ընդունվել այն օտարերկրացիները, որոնք ունեն առնվազն հիմնական ընդհանուր կրթություն (միջնակարգ դպրոցի մակարդակին համապատասխանող կրթություն), իսկ առանձին դեպքերում՝ ՀՅ միջնակարգ դպրոցի ութամյա մակարդակին համապատասխանող կրթություն:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ կարող են ընդունվել այն օտարերկրացիները, որոնք ունեն ՀՅ միջնակարգ դպրոցի ծրագրի մակարդակին համապատասխանող կրթություն: Բացի այդ, բուհերում անհատական պլանով ուսանելու համար կարող են ընդունվել գիտությունների (արվեստների) բակալավրի աստիճան ունեցող անձինք:

Այն օտարերկրացիները, որոնք չեն տիրապետում կամ վատ են տիրապետում հայերենին, ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական ֆակուլտետներ՝ (բաժիններ) մեկ տարի ժամկետով, որտեղ նրանք ուսումնասիրում են հայերենը (կամ այլ լեզու), հաշվի առնելով հետագա ուսուցման լեզուն և ընտրած մասնագիտությունը համապատասխան հանրակրթական առարկաներ (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, գծագրություն, աշխարհագրություն, պատմություն և այլն) ինչպես նաև ծանոթանում են ՀՅ օրենսդրությանը:

Ուսումնական տարվա վերջում անց են կացվում ավարտական քննություններ, որոնք հաջող հանձնած սովորողները շարունակում են ուսումը բուհերում:

Այն օտարերկրացիները, որոնք նախապատրաստական ֆակուլտետում սովորել են պետական պատվերով և ավարտական քննություններից ստացել են անբավարար գնահատականներ, հեռացվում են բուհից:

Օտարերկրացիները բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական իիմնարկների ասպիրանտուրա կարող են ընդունվել նագիստրոսի աստիճանի մասնագիտական որակավորման առկայության դեպքում, իսկ դոկտորանտուրա՝ գիտությունների թեկնածուի (փիլիսոփայության դոկտորի) գիտական աստիճանի առկայության դեպքում:

Բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական իիմնարկների ասպիրանտուրա կարող են ընդունվել այն օտարերկրացիները, որոնք ունեն բարձրագույն բժշկական, ինչպես նաև ընտրած մասնագիտությամբ բուժական հաստատություններում աշխատանքի առնվազն երկու տարվա վործ, կամ անցել են երկամյա կլինիկական օրդինատուրա (մասնագիտացում):

Բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական իիմնարկներում, որակավորման բարձրացման ֆակուլտետներում և դասընթացներում ստաժավորման կարող են ընդունվել բարձրագույն կրթություն ունեցող օտարերկրացիները՝ առանց տարիքային սահմանափակման:

Այլ պետության այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են սովորել ՀՀ բարձրագույն, հետքուհական, նախնական մասնագիտական (արիթետագործական) և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի անունով,
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված դիմում-հարցաթերթիկ,
3. անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճեները կամ մկրտության վկայականը,
4. կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը (թվանշաններով հյուպատոսական կամ պետական նոտարի վավերացմամբ),
5. 3x4 չափսի 4 լուսանկար,
6. ինքնակենսագրություն (CV, Resumee)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվել ցանկացողները ներկայացնում են նաև բժշկական տեղեկանք՝ ընդհանուր առողջության վիճակի մասին: Իսկ հետքուհական ուսումնական հաստատություն ընդունվելու համար դիմունները (հայցորդները)՝ նաև՝ ընտրած մասնագիտության թեմայով գիտական ռեֆերատ՝ 20 էջի սահմաններում, հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

Փաստաթղթերը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացվում են՝

1. դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված ամձի կողմից,
2. բարձրագույն ուսումնական հաստատության կողմից,
3. օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով կամ
4. փոստով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով)՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Գլխավոր պողոտա, Կառավարության տուն 3 հասցեով (կամ info@edu.am էլեկտրոնային փոստով):

3. Միջազգային կրթական չափանիշների ճանաչումը

8անկացած օտարերկրյա պետության կողմից տրված կրթության վկայական, որն օգտագործվում է ՀՀ տարածքում (հետագա կրթությունների կամ աշխատանքի համար), պետք է ճանաչվի և դրա համարժեքությունը պետք է հաստատվի՝ համաձայն 1997թ. ապրիլի 11-ին Լիսաբոնում ստորագրված կոնվենցիայի: Կոնվենցիայի հիման վրա տրվում է ճանաչման վկայական (միջազգային վկայականների և դիպլոմների ճանաչումը ՀՀ տարածքում): Կրթության և գիտության նախարարությունն աջակցում, ճանաչում և հաստատում է միջազգային կրթական հաստատությունների կողմից տրված կրթության վկայականների, գիտական աստիճանների և գիտական կոչումների հավասարությունը և տալիս է համապատասխան փաստաթուղթ (վկայական):

Կրթության վկայականի ճանաչման գործընթացը սկսելու համար անձը դիմում է ներկայացնում Ակադեմիական փոխանական և շարժումնության ազգային տեղեկատվական կենտրոն, որը ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է 2005թ.: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկին, ինչպես նաև հավելյալ տեղեկատվությունների մասին կարելի է ծանոթանալ կենտրոնի պաշտոնական վեր կայքից՝ <http://www.armenic.am>:

4. Սվյուրահայ դիմուդների ընդունելությունը

Սվյուրահայ դիմուդների ընդունելության կարգը, պայմանները և ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար առանձին: Օրինակ, 2009/2010 ուսումնական տարվա համար անվճար առկա ուսուցմանը բակալավրիատի կրթական ծրագրով ուսանելու համար

փաստաթղթերն ընդունվում էին մինչև 2009թ. օգոստոսի 20-ը ներառյալ (2011/2012 ուսումնական տարվա համար՝ մինչև 2011թ. օգոստոսի 24-ը ներառյալ), նախապատրաստական բաժնում ուսանելու համար՝ մինչև նոյեմբերի 6-ը ներառյալ (2011/2012 ուսումնական տարվա համար՝ մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ), իսկ հետքուհական ծրագրերով ուսանելու համար՝ մինչև սեպտեմբերի 30-ը (2011/2012 ուսումնական տարվա համար՝ մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ): ՀՀ կրթության և գիտության նախարարության նպատակն է համապատասխան կարգը, պայմանները և մոտավոր ժամկետները պահպանել անփոփոխ նաև հետագա ուսումնական տարիների համար:

Սփյուռքահայ դիմորդները փաստաթղթերը ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացնում անձամբ կամ այլ պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով:

Որպես կանոն, նրանք պետք է ներկայացնեն՝

- ա) դիմում ՀՀ կրթության և գիտության նախարարի անունով, որում պետք է նշված լինի ընտրած բուհը և մասնագիտությունը,
- բ) անձնագրի պատճեն,
- գ) ծննդյան վկայականի պատճեն՝ հայերեն (ռուսերեն) թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված,
- դ) կրթության վկայականի պատճեն՝ հայերեն (ռուսերեն) թարգմանությամբ և նոտարի կողմից հաստատված՝ նշելով ուսումնասիրած առարկաները և հանձնած քննությունները,
- ե) տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին,
- զ) տեղեկանք ԶԻԱՆ-ի (ՄՊԻԴ) վերաբերյալ,
- ե) 6 լրամանկար՝ 4x5սմ չափսի:

Ասպիրանտուրա ընդունվել ցանկացող սփյուռքահայերը լրացուցիչ ներկայացնում են ռեֆերատ կամ հրատարակված աշխատությունների ցանկը՝ նշելով հրատարակման ամսաթիվը և վայրը, 2-3 հրապարակումների պատճեն:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

2011/2012 ուսումնական տարում սփյուռքահայ ուսանողների համար ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 70 անվճար տեղ՝ Պետական պատվերի տեղերից բացի, սփյուռքահայ դիմորդները հնարավորություն ունեն ընդունվելու նաև վճարովի համակարգ: Ընդ որում, վճարովի տեղերի թիվը սփյուռքահայ ուսանողների համար չի սահմանափակվում:

Անվճար տեղեր, որպես կանոն, հատկացվում են միայն հայագիտական, մանկավարժական և մշակութային ֆակուլտետներում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել.
ՀՀ կրթության և գիտության նախարարություն կամ
այցելել նախարարության պաշտոնական վեր կայքը՝ <http://edu.am>:

Դ. ՀԱԲԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես է որոշվում ՀՀ վերադարձից հետո երեխայի դասարանը

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հաստատել է Հայաստանի և այլ պետությունների համրակրթական համակարգերի համարժեքության աստիճանները, համաձայն որի որոշվում է Հայաստան վերադարձ ՀՀ քաղաքացի երեխայի դասարանի հետշարժը: Բնակության վայրի մարզպետարանի կրթության բաժինը կրթական համարժեքության աստիճանի որոշումից հետո ցուցում է տալիս դպրոցի տնօրինությանը, որպեսզի ստուգեն երեխայի գիտելիքների մակարդակը և որոշեն, թե նա որերորդ դասարան պետք է հաճախի: Ուսասատանից վերադարձած դպրոցահասակ երեխաների համար դասարանի իջեցումը կատարվում է, որպես կանոն, մեկ տարով:

2. Ո՞ր դեպքում է շրջանավարտը հայոց լեզու առարկայի պետական ավարտական քննությունից ազատվում

Եթե 10-րդ դասարանի շրջանավարտը հայոց լեզուն ուսումնասիրել է միայն 9-րդ և 10-րդ դասարաններում, ապա նա իր ցանկությամբ կարող է ազատվել այդ առարկայի պետական քննությունից: Այդ դեպքում շրջանավարտի ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում գրվում է «չի ուսումնասիրել»:

3. Ո՞ր դեպքում են դիմորդները օգտվում ընդունելության քննությունները ռուսերեն լեզվով հանձնելու

հնարավորությունից

Ուսական կրթությամբ շրջանավարտներն ընդունելության քննությունները կարող են հանձնել ռուսերեն (բացառությամբ հայերեն և օտար լեզուների քննությունները):

4. Ո՞ր դեպքում է հնարավոր բուհի ընդունելության քննությունների ժամանակ հայոց լեզվի փոխարեն այլ լեզվից քննություն հանձնել

Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում հայոց լեզվից և գրականությունից գնահատական չունեցող դիմորդները հայոց լեզվի (գրավոր) քննության փոխարեն կարող են քննություն հանձնել ռուսաց լեզվից (գրավոր), իսկ ռուսաց լեզվից և գրականությունից գնահատական չունեցողները՝ որևէ օտար լեզվից՝ գրավոր (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն):

5. Ի՞նչ սկզբունքով է իրականացվում օտարերկրյա պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերից ՀՀ բուհեր ուսանողների տեղափոխումը

Օտարերկրյա պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհից ՀՀ բուհ ուսանողի տեղափոխությունն իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջավետական համաձայնագրերով ուսման գործուղված և առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհաղթահարելի հանգամանքների պատճառով ՀՀ վերադարձող ուսանողները, ընդունող բուհի ռեկտորի առաջարկությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

Ընդունող բուհը դրական կարծիքի դեպքում նախարարություն է ներկայացնում ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տեղափոխության մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:

6. Ի՞նչ լեզվով են սովորում ՀՀ երկբաղաքացիների երեխաները

ՀՀ-ում ուսման լեզում հայերենն է, սակայն ՀՀ երկբաղաքացիների երեխաները կարող են սովորել այն լեզվով, որն ընտրել են նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները): Նույնը վերաբերում է նաև այլ պետության քաղաքացիների, ՀՀ քաղաքացիություն չունեցողների երեխաներին, ինչպես նաև այն երեխաներին, ում ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրոցի:

ԲԱԺԻՆ 9

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Աշխատանքային գործունեություն իրականացնելու ընդհանուր կանոնները

Համապատասխան վիզա և կացության թույլտվություն ստանալու դեպքում՝ օտարերկրացին իրավունք ունի ՀՀ-ում իրականացնելու աշխատանքային գործունեություն, նույն պայմաններով և կարգով, ինչ և ՀՀ քաղաքացիները:

Օտարերկրացիներն իրավունք ունեն ՀՀ-ում ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ:

ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են 2004թ. ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որով նվազեցվում է աշխատանքային հարաբերությունների նկատմամբ պետության ազդեցությունը՝ շեշտը դնելով պայմանագրային հարաբերությունների վրա:

Աշխատողի աշխատանքային գործունեության մասին տեղեկությունները ներառող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրույկն է:

2. Աշխատաժամանակ, հանգստի ժամանակ (արձակուրդ)

Աշխատանքի նորմալ տևողությունը շաբաթական 40 ժամ է (օրական՝ առավելագույնը 8 ժամ): Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, արտաժամա աշխատանքի հետ միասին, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի եւ սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

Գիշերային աշխատանքի չեն կարող ներգրավվել մինչև 18 տարեկանները, ինչպես նաև նրանք, ում արգելվում է աշխատել գիշերային ժամերիմ՝ թշվի եզրակացությամբ:

Դոյջ կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողը (կին, թե տղամարդ) կարող են գիշերային ժամերին աշխատել միայն իրենց համաձայնությամբ:

Գիշերային ժամերն են՝ 22:00-ից մինչև 6:00:

Հանգստանալու և սնվելու համար յուրաքանչյուր աշխատողի տրամադրվում է ընդմիջում՝ ոչ ավել, քան 2 և ոչ պակաս, քան կես ժամ տևողությամբ:

Ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ շաբաթը և կիրակին:

Ամենամյա նվազագույն արձակուրդի տեևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

ՀՀ-ում աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝

1) 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության).

2) 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում.

3) 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորք մոր), հոր (խորք հոր), տատի, պապի կամ այլ հարազատի (այդ թվում՝ երեխային խնամակալ նշանակված անձի) ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխայի երեք տարեկան դաշտականը: Արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը):

Բ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՀՀ-ում գործատուն (աշխատանք տրամադրողը) պարտավոր է կնքել աշխատողի (աշխատանք կատարողի) հետ աշխատանքային պայմանագիր: Առանց աշխատանքային պայմանագրի աշխատանքը համարվիւմ է անօրինական աշխատանք:

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝

- անորոշ ժամկետով, եթե պայմանագրում ժամկետ նշված չէ, կամ
- որոշակի ժամկետով, եթե պայմանագրում ժամկետը նշված է:

Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել՝

1. որոշակի ժամանակահատվածով, կամ
2. օրացուցային ժամկետ որոշելով, կամ

3. նախատեսված աշխատանքների ավարտման ժամկետի սահմանմանը:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի հանաձայնությամբ,
- 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում,
- 3) աշխատողի կամ գործատուի նախաձեռնությամբ,
- 4) աշխատողի կամ գործատուի նահվան դեպքում,
- 5) այլ հիմքերով, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Աշխատանքային օրենսգրքը երաշխիքներ է նախատեսում աշխատողների համար հիվանդության, աշխատավայրում վնասվածք ստանալու դեպքերում, իդի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա խնամող աշխատող նայրերի պաշտպանության համար։ Այդ երաշխիքները գործում են նույնիսկ այն դեպքում, եթե դրանք նախատեսված չեն աշխատանքային պայմանագրով։

4. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՎԱՅՐԸ

Հայաստան աշխատուժի ազատ տեղաշարժի կարգավորման հետ կապված միջկառավարական համաձայնագրեր է կնքել ԱՊՀ մասնակից պետություններից Ռուսաստանի Դաշնության, Ռւկրախնայի, Բելառուսի, Թուրքմենստանի հետ, ինչպես նաև Վրաստանի, Կատարի Պետության և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ։

Հիշյալ համաձայնագրերով նախատեսվում է, որ կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է (առանց օրինականացման) վկայագրերը, կրության մասին վկայականները, որակավորում, կարգ և կոչում շնորհելու մասին համապատասխան փաստաթղթերը, աշխատանքային գործունեություն իրականացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև մեկնան կողմի տարածքում սահմանված կարգով վավերացված նրանց թարգմանությունները։

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ-ում աշխատանքային գործունեության պետական քաղաքականությունն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (<http://www.mss.am>), իսկ աշխատանքային իրավունքի և օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողությունը՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը (<http://www.apt.am>)։

ԲԱԺԻՆ 10

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության,
կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված
այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»
(ՀՀ Սահմանադրություն, հոդված 37)

Ա. ԿԵՆՍԱԹՈՂԱԿ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱԾԱԼՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքացիների այլ պետություններ մեկնելու դեպքում կենսաթոշակ ստանայու երաշխիքները

Մինչ 2009թ. փետրվարը գործող կարգի համաձայն՝ այլ պետություն մշտական բնակության մեկնելու դեպքում կենսաթոշակ վճարելը դադարեցվում էր: Այլ պետություն մշտական բնակության մեկնող կենսաթոշակառուին միանվագ վճարվում էր վեց ամսվա կենսաթոշակ կամ մինչև կենսաթոշակ ստանալու ժամկետը լրանալը, բայց վեց ամսից ոչ ավելի:

Նշված գումարը կենսաթոշակառուին վճարվում էր նրա կողմից գրավոր դիմում ներկայացնելու և հաշվառումից դուրս գալու դեպքում՝ մեկ ամսվա ընթացքում, որից հետո կենսաթոշակի վճարումը դադարեցվում էր:

2009թ. փետրվարից հետո նշված կարգը փոփոխվեց, և այսուհետ, այլ պետություն մշտական բնակության մեկնելու դեպքում քաղաքացու կենսաթոշակը վճարվում է լիազորագրով:

Կենսաթոշակը մեկ լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի՝ սկսած կենսաթոշակ չստացված ամսից: Նշված ժամկետը լրանալուց հետո պետք է ներկայացվի նոր լիազորագիր, որը կգործի նոյն (տասներկու ամսի) ժամկետով:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ ըստ կենսաթոշակառուի ցանկության:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ԱՊՀ մասնակից պետություններ մշտական բնակության մեկնելու դեպքում ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը դադարեցվում է, եթե նոյն տեսակի կենսաթոշակ նախատեսված է մշտական բնակության պետության օրենսդրությամբ (տես՝ սույն պարագանի 2-րդ կետը):

2. ՀՀ ԵՐԿՐՈՎԱԴՐԱԳԻՆԵՐԻ և ՕՏԱՐԵՐԿՐՈՎԱԳԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀՀ երկրադրագիների և օտարերկրովագիների կենսաթոշակային ապահովության իրավունքն ապահովվում է՝

- ՀՀ միջազգային պայմանագրուով,
- ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

2.1. 1992թ. մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրի մասնակից պետությունների¹⁰, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող քաղաքացիներին կենսաթոշակ է նշանակվում ըստ ՀՀ-ում նրանց հաշվառման վայրի, եթե նախկին բնակության երկրում նրան նշանակված կենսաթոշակի վճարումը դադարեցված է:

Կենսաթոշակը նշանակվում է նախկին բնակության երկրում կենսաթոշակի վճարելը դադարեցված լինելու մասին տեղեկանքի կամ կենսաթոշակ նշանակող մարմնից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայնագրով նախատեսված է նաև, որ ԱՊՀ անդամ, ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող պետությունների, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի պատկան մարմինների կողմից մինչև 1991թ. դեկտեմբերի 1-ը տրված՝ ապահովագրական ստաժին վերաբերող փաստաթղթերն ընդունվում են առանց վավերացման:

2.2. 2011թ. հունվարի մեկից գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակի իրավունք ունեն նաև ՀՀ երկրադրագիները և օտարերկրովագիները:

Օտարերկրովագիները կենսաթոշակի և կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն ՀՀ-ում բնակվելու իրավունք ունենալու ողջ ժամանակահատվածում: ՀՀ-ում փախստականի կարգավիճակ

¹⁰ Այդ պետություններն են. Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ուկրաինան:

չունեցող օտարերկրացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է:

ՀՀ երկաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա մշտապես կամ առավելապես բնակվում է ՀՀ-ում (այսինքն՝ հաշվառված է բնակության վայրի հասցեով) և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից:

ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքն օգտագործող գործառուները նրանց մասով ազատվում են սոցիալական վճարների կատարման պարտականությունից:

Երկաղաքացիների և օտարերկրացիների՝ ՀՀ-ում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե՝

- լրացել է ՀՀ-ում բնակվելու իրավունքի ժամկետը (օտարերկրացիների համար),
- այլ պետությունում մշտապես կամ առավելապես բնակություն հաստատելու (ՀՀ բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու) կամ ՀՀ քաղաքացիությունից զրկվելու դեպքում (ՀՀ երկաղաքացիների համար),
- այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում (օտարերկրացիների և ՀՀ երկաղաքացիների համար):

3. ՀՀ-ում պետական նպաստ ստանալու իրավունք ունեցող անձինք

ՀՀ-ում պետական նպաստ ստանալու իրավունք ունեն՝

- ՀՀ քաղաքացիները,
- ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները,
- քաղաքացիություն չունեցող անձինք,
- ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:

Պետական նպաստի տեսակներն են՝

- ընտանեկան նպաստը և միանվագ դրամական օգնությունը,
- երեխայի խնամքի նպաստը,
- երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստը:

Միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է՝

- ընտանիքում երեխայի ծննդյան,
- ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու,
- ընտանիքի անդամի մահվան դեպքերում:

Ընտանիքին տրամադրվող օգնության տեսակ է նաև իրատապ օգնությունը, որը նշանակվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքին: Կյանքի դժվարի իրավիճակներից են համարվում երեխայի դպրոց հաճախելու հետ կապված ծախսերի մասնակի հատուցման կարիքը, արտակարգ իրավիճակների և կարճատև ֆինանսական խնդիրներ ունենալը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Դանրապետության հրապարակ, Կառավարության 3-րդ շենք
Էլ. փոստ՝ hasmik.khachatryan@mss.am
Վեբ կայք՝ <http://www.mss.am>

Բ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՍՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Համաձայն ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ օտարերկրացին ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: ՀՀ-ում բժշկական ծառայություններ ստանալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

1. Օտարերկրացիների և այլ պետություններում ՀՀ քաղաքացիների իրավունքները բուժսպասարկման ոլորտում

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում գտնվող յուրաքանչյուր ոք (այդ թվում՝ օտարերկրացին) իրավունք ունի ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ ՀՀ օրենսդրության, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն:

Յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ օտարերկրացին, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, այլ աղբյուրների հաշվին:

Օտարերկրացին, իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Նրանք նաև իրավունք ունեն այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, այլ աղբյուրների հաշվին:

ՀՀ-ում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են յուրաքանչյուր մարդու (այդ թվում՝ օտարերկրացու) ցուցաբերել անհետաձգելի, առաջին բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից:

Այլ պետություններում ՀՀ քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է տվյալ պետության օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով:

2. ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու առանձնահատկությունները

2000թ. ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 1997թ. մարտի 27-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «Բժշկական ծառայությունների տրամադրման կարգի մասին» Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին համաձայնագիրը:

Համաձայնագրով սահմանվում է, որ ԱՊՀ մասնակից պետությունների հիվանդ քաղաքացիներին ցուցաբերվող անհետաձգելի և շտապ բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է անվճար: Սա չի վերաբերում բժշկական օգնության և սպասարկման այլ տեսակներին:

Գ. ՀԱՅԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Պարտադիր է արդյոք աշխատանքային ստաժը ՀՀ-ում կենսաթոշակ ստանալու համար

Աշխատանքային ստաժը կարող է պարտադիր պայման լինել որոշ տեսակի կենսաթոշակների համար: Օրինակ, տարիքային աշխատանքային կենսաթոշակի համար անհրաժեշտ է, որ անձը (կին, թե տղամարդ) լինի 63 տարեկան և ունենա առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ: Իսկ ծերության կենսաթոշակ ստանալու համար աշխատանքային ստաժ չի պահանջվում. միայն պահանջվում է, որ լրացած լինի անձի 65 տարին:

2. Իրականացվու՞ն է արդյոք ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրություն

ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության մասին իրավական ակտեր չկան: Բժշկական ապահովագրությունն իրականացվում է կամավոր սկզբունքով՝ համապատասխան ապահովագրական ընկերություններում:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել.
ՀՀ առողջապահության նախարարություն
Հասցե՝ 0010, Յայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Էլ-փոստ՝ info@moh.am
Վեբ կայք՝ <http://www.moh.am>

ԲԱԺԻՆ 11

**ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ա. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում օտարերկրացիներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե ՀՀ սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Սա վերաբերում է նաև սեփականության իրավունքին:

ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ օտարերկրացին, իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության, ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում (եթե այն բխում է գերակա հանրային շահերից) համարժեք փոխհատուցմանք:

ՀՀ հոդային օրենսգրքի համաձայն՝ ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրացիները (տես՝ Բաժին 7) կարող են ցանկացած տեսակի հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Մյուս օտարերկրացիները առանձին դեպքերում կարող են սեփականության իրավունք ունենալ միայն այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման (սպասարկման), հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման (սպասարկման), բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման (սպասարկման) համար հոդամասերի նկատմամբ:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ-ում անշարժ գույքի հետ կապված գործարքների համար (առուվաճառքի պայմանագրի կնքում և այլն) հիմնականում պահանջվում է նոտարական վավերացում, որից հետո սեփականության իրավունքի պետական գրանցումն իրականացնում է ՀՀ կառավարության առջնորդության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (պաշտոնական վեբ կայքը՝ <http://www.cadastre.am>):

Բ. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔՆՍԱՐԿՈՒՄԸ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Այլ պետությունների իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերը և ակտերը նոտարները քննարկման են ընդունում միայն հյուպատոսական վավերացման (կամ ապոստիլի) առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ միջազգային պայմանագրերով:

«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961թ. հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիային միացած պետությունների իրավասու մարմինների մասնակցությամբ կազմված կամ նրանց կողմից տրված փաստաթղթերը և ակտերը մասնակից մյուս պետությունները քննարկման են ընդունում նաև ապոստիլի առկայության դեպքում:

ԱՊՀ մասնակից պետությունների միջև ստորագրված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունների իրավասու մարմինների պատրաստված կամ վավերացված այն փաստաթղթերը, որոնք հաստատված են պետական գինանշանի պատկեր ունեցող կնիքով, նոտարական գրասենյակների կողմից ընդունվում են առանց հյուպատոսական վավերացման կամ ապոստիլի:

Վրաստանի, Բուլղարիայի Հանրապետության, Ռումինիայի հետ կնքված միջազգային պայմանագրերի համաձայն, այդ պետությունների իրավասու մարմինների պատրաստած կամ վավերացրած փաստաթղթերը, որոնք հաստատված են համապատասխան մարմնի կնիքով, նոտարական գրասենյակների կողմից ընդունվում են առանց հյուպատոսական վավերացման (կամ ապոստիլի):

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

ՀՀ-Ը Հաագայի կոնվենցիային միացել է 1993թ. նոյեմբերի 19-ին և ՀՀ-ի համար այն ուժի մեջ է մտել 1994թ. օգոստոսի 14-ից: Հաագայի կոնվենցիան, ինչպես նաև կոնվենցիային միացած պետությունների շամկը կարելի է գտնել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական վեբ կայքում՝ <http://www.moj.am>:

Գ. ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋՈՒՄ

ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ ՀՀ մշտական բնակության ժամանող յուրաքանչյուր ոք (ֆիզիկական անձ) կարող է առանց մաքսատուրքի վճարման ներմուծել իր անձնական օգտագործման գույքը:

Այդ արտոնության կապակցությամբ պետք նկատի ունենալ՝

- անձնական օգտագործման գույք է համարվում ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման ավտոմեքենան և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում, անձի կողմից ծեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը,
- ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձ է համարվում ՀՀ տարածքից այլ պետություն մշտական բնակության մեկնած՝ ՀՀ-ում մշտական բնակության վայրի հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացին, ինչպես նաև ՀՀ-ում նախկինում մշտական բնակության վայր չունեցած ՀՀ քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը, որոնք ՀՀ ժամանելուց հետո ՀՀ-ում հաշվառվում են որպես մշտական բնակիչ և մաքսային մարմիններին են ներկայացնում ՀՀ-ում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը (ֆիզիկական անձի մշտական բնակության վայրի նշումով անձնագիրը կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթը),
- ՀՀ քաղաքացին, մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանելիս, մաքսային մարմիններին պետք է ներկայացնի նաև այլ պետությունում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը,
- ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անձնական օգտագործման գույքը պետք է ՀՀ ներմուծվի մշտական բնակության նպատակով ՀՀ-ում հաշվառվելու օրվան նախորդող կամ հաջորդող 180 օրերի ընթացքում,
- այդ արտոնությունից նույն անձը կարող է օգտվել իինգ տարվա ընթացքում մեկ անգամ:

Դ. ՀԱՅԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է համարվում անշարժ գույք

Անշարժ գույք է համարվում հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմանյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը և հողին ամրակցված այլ գույքը:

2. Ի՞նչ է ապոստիլը

Ապոստիլը հատուկ դրոշմակնիք է, որը հեշտացնում է քաղաքացու իրավական փաստաթղթերի ճանաչումը այլ երկրներում: Դրանով վավերացվում է փաստաթուղթն ստորագրած անձի պաշտոնի, ստորագրության, ինչպես նաև այդ փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը:

3. Ո՞ր փաստաթղթերի վրա ՀՀ-ում չի դրվում ապոստիլ

Ապոստիլ չի դրվում դիվանագիտական կամ իյուպատոսական ներկայացուցիչների կողմից տրված փաստաթղթերի, ինչպես նաև առևտրային կամ մաքսային գործողություններին ու գործարքներին ուղղակիորեն վերաբերող փաստաթղթերի վրա: Ապոստիլ չի դրվում նաև ՀՀ օրենսդրությանը հակասող փաստաթղթերի վրա:

ԲԱԺԻՆ 12

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ

Ա. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ռեժիմը կարգավորվում է 1994թ. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով:

1. Օտարերկրյա ներդրումների երաշխիքները

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը նախատեսված է օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար և երաշխավորում է, որ օտարերկրյա ներդրումները՝

- 1) չեն կարող ազգայնացվել,
- 2) չեն կարող բռնագրավվել,
- 3) կարող են առգրավվել՝ միայն արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

Օտարերկրյա ներդրումներին և օտարերկրյա վարձու աշխատողներին իրավունք է տրվում և երաշխավորվում է ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման հետևանքով ստացած շահույթը (եկամուտը) և այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես սույն օրենքի 9 հոդվածով նախատեսված փոխհատուցում: Օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:

2. Օտարերկրյա ներդրումների տեսակները

Օտարերկրյա ներդրումները կարող են ՀՀ տարածքում ներդրումներ իրականացնել՝

- ա) արտարժույթով, արժութային այլ արժեքներով, հայկական դրամով,
- բ) շարժական ու անշարժ գույքով (շինություններ, շենքեր, սարքավորումներ և նյութական այլ արժեքներ) և դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով,
- գ) բաժնետոմսերով, պարտատոմսերով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով,
- դ) դրամական պահանջների ձևով և պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով,
- ե) արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով,
- զ) ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաև բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով,
- է) վճարովի ծառայություններով,
- ը) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով:

3. Օտարերկրյա ներդրումների իրականացման ձևերը

Օտարերկրյա ներդրումներն իրավունք ունեն ներդրումներ իրականացնել հետևյալ ձևերով՝

- ա) օտարերկրյա ներդրումներին ամբողջությամբ պատկանող ձեռնարկությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող ձեռնարկությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով,
- բ) ՀՀ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ նոր ձեռնարկություններ հիմնադրելու կամ գործող ձեռնարկություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով,
- զ) ՀՀ օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով,
- դ) ինքնուրույն կամ ՀՀ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ հողօգտագործման իրավունք և ՀՀ տարածքում բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիաներ ձեռք բերելու միջոցով,
- ե) գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով,
- զ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով, մասնավորապես՝ ՀՀ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ՀՀ

քաղաքացիների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Բ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐՈՂՈՒՄՆԵՐԻՎ ԶԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՀՀ-ում արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ առանց պետական գրանցման (հաշվառման): Ֆիզիկական անձանց թույլատրված է առանց գրանցման ՀՀ տարածք ներմուծել անձնական օգտագործման սահմանափակ քանակությամբ առարկաներ, իսկ դրանց վերավաճառքի համար պահանջվում է անհատ ձեռնարկատիրոջ գրանցում: Դայատանում գրանցում չի պահանջվում այն ձեռնարկությունների համար, որոնք գործում են որպես ՀՀ տարածքից արտահանողներ՝ գտնվելով նրա տարածքից դուրս:

Գործունեության որոշ տեսակների համար պահանջվում է լիցենզիա:

Իրավաբանական անձանց և ամհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը կատարվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից: Պետական ռեգիստրը բաղկացած է կենտրոնական և տարածքային մարմիններից (տես <http://www.moj.am> («Նախարարություն/Կառուցվածք») բաժինը):

Գրանցումից և գրանցման վկայականը ձեռք բերելուց հետո իրավաբանական անձը գրանցման ամսաթիվ մեկ ամսվա ընթացքում պետք է հաշվառվի ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան տարածքային հարկային մարմնում:

Իրավաբանական անձի ստեղծումը բաղկացած է 2 փուլից՝

- օրենքով նախատեսված փաստաթղթերի հավաքում և կազմում,
- պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

1. Դայատանում իրավաբանական անձանց տեսակները

Դայատանում հաճախ հանդիպող իրավաբանական անձանց տեսակներն են՝

Բաժնետիրական ընկերություններ

Բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի տեսակ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի՝ սահմանելով բաժնետերերի՝ ընկերության գործունեության հետ կապված իրավունքների ու պարտականությունների ծավալը: Բաժնետիրական ընկերությունները լինում են երկու տեսակի՝ բաց բաժնետիրական ընկերություններ և փակ բաժնետիրական ընկերություններ: Բաց բաժնետիրական ընկերությունը կարող է առանց սահմանափակումների թողարկել բաժնետոմսեր ու վաճառել դրանք: Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի օտարել իր բաժնետոմսերն առանց մյուս բաժնետերերի համաձայնության: Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադրների միջև, որոնց թիվը սահմանափակ է (օրենքով նախատեսված բաժնետերերի առավելագույն թիվը 49 է):

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վճարների ռիսկը:

Մասնաճյուղեր

Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժնումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները: Դայատանում ավելի հեշտ է ու թիվ ծախսատար մասնաճյուղի հիմնումը: Մասնաճյուղի հիմնումը որևէ ֆինանսական ներդրում չի պահանջում: Ցանկացած օտարերկրյա կազմակերպության մասնաճյուղ պետք է գրանցվի պետական ռեգիստրում: Դրա համար կազմակերպությունը պետք է ներկայացնի մասնաճյուղի հիմնելու վերաբերյալ օտարերկրյա կազմակերպության ընդունած որոշումը հաստատող նամակ, ինչպես նաև փաստաթուղթ, որը կհաստատի, որ կազմակերպությունը գրանցված է դրա հիմնադրման երկոր օրենսդրությանը համապատասխան:

Ներկայացուցչություններ

Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս

տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը: Ներկայացուցչությունը շատ նման է մասնաճյուղին: Այն նույնպես տեղակայված է ու գործում է հիմնադիր կազմակերպության գտնվելու վայրից դուրս և չունի իրավաբանական անձի կարգավիճակ: Այն, ինչպես և մասնաճյուղը, գործում է համաձայն հիմնադիր իրավաբանական անձի հաստատած լիազորությունների:

Մասնաճյուղի և ներկայացուցչության միջև հիմնական տարրերությունը հետևյալն է: Ներկայացուցչությունը ներկայացում և պաշտպանում է հիմնադիր կազմակերպության շահերը, մինչեւ մասնաճյուղը կարող է իրականացնել իրավաբանական անձի բոլոր գործառույթները՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

2. Իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերը

Իրավաբանական անձանց գրանցման համար անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանում ներկայացնել հետևյալ հիմնական փաստաթղթերը՝

- ա) իրավաբանական անձի հիմնադիրի (հիմնադիրների) կամ գործադիր մարմնի ղեկավարի կամ հիմնադիրի (հիմնադիրների) լիազորված անձի դիմումը,
- բ) իրավաբանական անձ հիմնադիրելու մասին հիմնադիր ժողովի (որին մասնակցում են հիմնադիրներն անձանք) արձանագրությունը՝ ստորագրված բոլոր հիմնադիրների կամ նախագահի և քարտուղարի կողմից,
- գ) կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,
- դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը (12000 ՀՀԴ, վճարված ցանկացած բանկում),
- ե) դիմում՝ կազմակերպության անվանումը գրանցելու համար (կազմակերպության անվանումը գրանցելու համար պետք է վճարվի 5000 ՀՀԴ պետական տուրք):

Եթե հիմնադիրը օտարերկրյա իրավաբանական անձ է, կամ հիմնադիրների թվում կա օտարերկրյա իրավաբանական անձ, ապա հիմնադիրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը, որոնք պետք է լինեն հայերեն թարգմանված և նոտարական կարգով վավերացված՝

- ա) քաղվածք կազմակերպության գրանցման երկրի պետական ռեգիստրից, որը տեղեկատվություն է պարունակում գրանցման պահին նշված իրավաբանական անձի կազմակերպարավական ձևի և դրա իրավական կարգավիճակի վերաբերյալ,
- բ) օտարերկրյա իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերը, օրինակ՝ կազմակերպության կանոնադրությունը կամ այլ համարժեք փաստաթղթեր,
- գ) օտարերկրյա իրավաբանական անձի կառավարման լիազոր մարմնի որոշումը կազմակերպություն հիմնելու վերաբերյալ:

Այս փաստաթղթերը հիմնականում պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

- ա) իրավաբանական անձի կարգավիճակը և կազմակերպարավակական ձևը.
- բ) ռեգիստր երկրում գրանցման ամսաթիվը.
- գ) կազմակերպության իրավաբանական անվանումը.
- դ) կազմակերպության գտնվելու վայրը.
- ե) գործունեության ժամանակահատվածը.
- գ) կազմակերպության կառավարման մարմինների իրավասությունը (Հիմնադիրների ժողովը, Խորհրդադիրը, Գործադիր մարմինը)
- է) կառավարման մարմինը, որն իրավասու է որոշումներ ընդունել կազմակերպության հիմնադիրնան, կանոնադրական կապիտալում բաժնեմաս ձեռք բերելու և մասնակցությունը դադարեցնելու վերաբերյալ:

Օտարերկրյա ֆիզիկական անձը, որն ուզում է կազմակերպություն բացել Հայաստանում պետք է վերը նշված փաստաթղթերի ցանկին կցի նաև իր անձնագրի թարգմանված և նոտարական կարգով վավերացված պատճեն:

3. Իրավաբանական անձանց պետական գրանցման կարգը

Իրավաբանական անձանց պետական գրանցման համար վերոնշյալ փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց գտնվելու վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում: Անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման համար փաստաթղթերը կարող են ներկայացվել բնակության կամ հաշվառման վայրի պետական ռեգիստրի տարածքային

ստորաբաժանում:

Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետական ռեգիստր ներկայացմելուց հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը պետք է կատարի համապատասխան պետական գրանցումը, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի դեկավարի մասին տեղեկությունների գրանցամբ պայմանավորված պետական գրանցումը:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Այսօր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը հնարավոր է իրականացնել նաև էլեկտրոնային ռեգիստրում՝ <https://www.e-register.am> վեր կայքի միջոցով՝ (տես՝ Բաժին 13 (Հաճախ տրվող հարցեր)):

Գ. ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԴԱՍԱՐ

Միջազգային կազմակերպությունները Հայաստանի ներդրումային և առևտորի քաղաքականությունը գնահատում են ԱՊՀ մասնակից պետություններում ամենաբացը: Օտարերկրյա ընկերությունների ներդրումները խրախուսվում են, և դրանք ունեն որոշ առավելություններ: Կառավարության օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հստակ դիրքորոշման շնորհիվ ՀՀ ներդրումային միջավայրը շարունակաբար բարելավվում է ներառյալ օրենսդրության կատարելագործումը:

1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՐԺԱՐԻՅԹՆԵՐ

- բաղաքական և տնտեսական կայունություն
- բարենպաստ ներդրումային օրենսդրություն
- ներդրումային երաշխիքներ
- կառավարության ամուր դիրքորոշում
- լավ կրթված, որակավորված աշխատուժ
- մատչելի աշխատուժ և գիտության վրա հիմնված որակ
- օտարերկրյա սեփականության սահմանափակման բացակայություն
- էլեկտրաէներգիայի նրոցունակ գներ
- մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ
- արտահանման մաքսատուրքի բացակայություն
- արտարժույթի ազատ փոխարկում
- շահույթի անվճար վերադարձ
- աշխատակազմի անսահմանափակ համալրում
- փողային անսահմանափակ փոխադրումներ

1991 թվականից օտարերկրյա ներդրումների հոսքն ածեց, և ածի դիմամիկան հուսադրող է: 2000-2008թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 3 միլիարդ ԱՄՆ դոլար:

Հավելյալ տեղեկությունների և խորհրդատվության համար դիմել.

1. Զարգացման Հայկական Գործակալություն (<http://www.adam.am>)

Զարգացման հայկական գործակալություն (ԶՀԳ) ՓԲԸ-ն հիմնադրվել է 1998թ. ապրիլին, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումներին աջակցելու և արտահանումը խթանելու համար:

ԶՀԳ-ն գործում է որպես «մեկ կանգառի պատուհան» գործակալություն ներդրողների համար՝ աջակցելով նրանց Հայաստանում գործարարություն ծավալելու, օգնելով նախագիծ մշակելու հարցերում և կապող օղակ է հանդիսանում գործարարների և պետական մարմինների միջև՝ տրամադրելով նրանց տեղեկատվություն երկրում առկա ներդրումային հնարավորությունների, օրենսդրական-կարգավորիչ դաշտի վերաբերյալ: Արտահանման խթանման ոլորտում ԶՀԳ-ն աջակցում է արտահանման շուկաներ գտնելու հարցում, իրականացնում է շուկայական ուսումնասիրություններ և նոր գործընկերներ է փնտրում հայաստանյան ձեռներեցների համար՝ արտահանման ծավալներն ընդլայնելու և հայկական արտադրությունը զարգացնելու նպատակով: ԶՀԳ-ն նաև կազմակերպում է միջազգային կոնֆերանսներ, գործարար ֆորումներ, առևտորային տոնավաճառներ ու ցուցահանդեսներ:

Կառավարությունը ԶԴԳ-ն դիտում է որպես հիմնական ազգային միջնորդ և կապող օլակ քաղաքականության զարգացման ու իրականացման, ինչպես նաև հանրային և մասնավոր ոլորտների միջև: ԶԴԳ-ի խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է:

ԶԴԳ-ն նաև հանակարգում է ՀՀ գործարար աջակցման խորհրդի (ԳԱԽ) գործունեությունը, ինչը հնարավորություն է ընձեռում լսելի դարձնել ծեռնարկությունների տեսակետները կառավարությանը: ԶԴԳ-ն նաև ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աջակցման խորհրդի քարտուղարությունն է:

ԶԴԳ-ն համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսին են Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի միջազգային զարգացման գործակալությունը և այլն:

2. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատ (<http://www.armcci.am>)

Պալատի գործառույթներն են՝

- սահմանում է ՀՀ այն առևտրային կազմակերպությունների և անհատ ծեռնարկատերերի ոչ պետական գրանցամատյանի վարման կարգը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետության տարածքում և այլ պետություններում ծեռնարկատիրական գործունեության մեջ նրանց հուսալի և վստահելի գործընկեր լինելու մասին.
- ոչ պետական գրանցամատյանի վարում, որում ընդգրկվում են ՀՀ այն առևտրային կազմակերպությունները և անհատ ծեռնարկատերերը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետության տարածքում և այլ պետություններում ծեռնարկատիրական գործունեության տեսանկյունից դրանց վստահելիության և հուսալիության մասին.
- հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպությունների, անհատ ծեռնարկատերերի դիմումի հիման վրա ապրանքների անկախ փորձաքննության անցկացում, դրանց որակի, քանակի և կոմպլեկտայնության վերահսկողություն և ստուգում.
- հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպություններին և անհատ ծեռնարկատերերին գյուտերի, օգտակար նողենների, արդյունաբերական նմուշների, նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման, վայրերի անվանումների գրանցման, ինչպես նաև ցուցահանդեսներին նաև կանոնադրական գործում աջակցության ցուցաբերում.
- գործարար ծրագրերի մշակում.
- տեղեկատվական շտեմարանների ստեղծում.
- Հայաստանում և այլ պետություններում ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում, դրանցում հայ գործարարների նաև կանոնադրական օժանդակում.
- օրենսդրությանը չհակասող և իր կանոնադրական խնդիրներից բխող այլ գործունեության իրականացում:

3. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն (<http://www.umba.info.am>)

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նպատակներն ու խնդիրներն են՝

- օժանդակել գործարարության զարգացման պայմանների ստեղծմանը և գործարար խավի կայացմանը.
- սերտ կապեր հաստատել այլ պետությունների համանման կազմակերպությունների և Սփյուռքի գործարար շրջանների հետ.
- աջակցել հանրապետության ներդրումային քաղաքականության բարելավմանը, օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավմանը.
- կազմակերպել գործարար համաժողովներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ, խթանել մրցունակ ապրանքատեսակների արտադրությանը, արտահանման ներուժի ընդարձակումը և այլն:

ԲԱԺԻՆ 13

**ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ա. ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գործարար միջավայրի բարելավման հեռանկարները

ՀՀ-ում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով՝ ՀՀ կառավարությունն ընդունել է մի շարք ծրագրեր, որոնցով բարեփոխումներ են իրականացվել հետևյալ 10 ուղղություններով:

Հարկերի վճարում

Կրճատվել են հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային վճարումների կատարման պարբերականությունները:

Արտաքին առևտուր

Բարեփոխումներ են իրականացվել ապրանքների պարտադիր հավաստագրման, անասնաբուժական հսկողության, բուսասանիտարական հսկողության, ծագման երկրի որոշման և հավաստագրերի տրամադրման արտաքին առևտուրին առնչվող տեխնիկական հսկողության մի շարք ոլորտներում, ներդրվել են մաքսային հայտարարագրման և մաքսային ձևակերպումների էլեկտրոնային համակարգեր:

Հնկերության իիմնադրում

Հիմնվել է իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման կենտրոնը, որը գործում է մեկ պատուհանի սկզբունքով, ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման էլեկտրոնային համակարգը (www.e-register.am):

Շինարարական թույլտվություններ

Հստակեցվել և կրճատվել են շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ գործընթացները և ժամկետները:

Պայմանագրերի կիրարկում

Վերացվել է իրավաբանական անձանց կողմից կնիք ունենալու պարտադիր պահանջը:

Վարկերի ստացում

ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են վարկային տեղեկատվության գաղտնիության ապահովմանը, վարկային բյուրոների լիցենզավորմանը (այս ոլորտը նախկինում չէր կարգավորվում):

Ներդրողների պաշտպանվածություն

2011թ. հունիսին «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց միջոցով կատարելագործվել են գործարքների (տնտեսական գործունեության) բացահայտման մեխանիզմները:

Սեփականության գրանցում

Սեփականության պետական գրանցման ոլորտում ներդրվել են գրանցման արագացված գործակիցներ:

Ձեռնարկության փակում/լուծարում

Կրճատվել են ընկերությունների լուծարման գործընթացի ժամկետները:

Աշխատանքային հարաբերությունների կարգավորում

ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել են գործարարության աջակցման թեժ գծեր, ինչպես նաև միջգերատեսչական խորհուրդ, որը զբաղվում է հարկային և մաքսային մարմինների գործողությունների կամ նրանց կողմից կայացված որոշումների գանգատարկմաբ:

ՀՀ կառավարության նպատակն է ՀՀ-ն տարածաշրջանում դարձնել գործարարության տեսանկյունից առավել բարենպաստ երկրներից մեկը:

ՀՀ-ում գործարար միջավայրի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (<http://www.mineconomy.am>, հեռախոս՝ +37410/597130>):

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները կրճատվել են՝ 169-ից դառնալով 96-ը; Ստեղծվել է լիցենզիաների ձեռքբերման էլեկտրոնային հնարավորություն (www.e-gov.am): Ներդրվել է ձեռնարկությունների գրանցման, լիցենզավորման և հարկային հաշվետվությունների առցանց (on-line) ստացման և ներկայացման համակարգ:

Աղբյուր՝

<http://www.mineconomy.am>

2. «Գործարարությամբ գրաղվելը» ("Doing Business")

Գործարար միջավայրի բարելավման ծրագրերը ՀՀ-ում մշակվում են «Գործարարությամբ գրաղվելը Հայաստանում» բարեփոխումների հուշագրի հիման վրա: 2008 թվականից Հուշագրով ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարված բարեփոխումների արդյունքում վերջին տարիներին Հայաստանի գործարար միջավայրը զգալիորեն բարելավվել է:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի 2011թ. հոկտեմբերին հրապարակած «Գործարարությամբ գրաղվելը 2012» գեկույցի տվյալներով՝ 2010թ. հունիսից մինչև 2011թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ն գործարար միջավայրում իրականացրել է մի շարք բարեփոխումներ:

ՀՀ-ում էականորեն բարելավված են հետևյալ հինգ ոլորտերը՝

- ընկերության հիմնում,
- շինարարական թույլտվությունների ստացում,
- վարկերի ստացում,
- հարկերի վճարում,
- ձեռնարկության փակում (լուծարում):

Բիզնեսի վարման գրավչությամբ ՀՀ-ն ԱՊՀ մասնակից պետությունների շարքում գրաղեցնում է 2-րդ տեղը՝ Ղազախստանից հետո:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

“Doing Business”-ը համաշխարհային հեղինակություն ունեցող փորձագիտական ծրագիր է (մեկարկել է 2002թ.), որը հնարավորություն է տալիս առավել օբյեկտիվ գնահատել 183 պետություններում (այդ թվում՝ Հայաստանում) առկա գործարար միջավայրը և գործող օրենսդրությունը:

Աղյուրը՝

<http://www.doingbusiness.org>

3. Ազատ տնտեսական գոտիներ

Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման նպատակն է հիմնական սահմանափակումների վերացման միջոցով նպաստել ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և ապահովել երկրի կայուն տնտեսական զարգացումը:

2011թ. մայիսին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով ազատ տնտեսական գոտիներում գործարարությամբ գրաղվողների համար նախատեսվում է տալ հետևյալ արտոնությունները՝

- ավելացված արժեքի հարկից ազատում՝ ազատ տնտեսական գոտու կազմակերպիչն և ազատ տնտեսական գոտու շահագործողին (ռեզիլենտն) ծառայությունների մատուցման, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարնան մասով,
- ռեզիլենտներին ազատում շահութահարկից (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկից (անհատ ձեռնարկատերների համար)՝ ազատ տնտեսական գոտու իրականացված գործունեության մասով,
- ազատ տնտեսական գոտու տարածքում գտնվող, ռեզիլենտներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների ազատում գույքահարկից,
- առանց մաքսային վճարների գանձման և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման արտահանում,
- ազատ տնտեսական գոտում պետական մարմինների կողմից ծառայությունների մատուցում «մեկ պատուհան» (one stop shop) սկզբունքով:

Ազատ տնտեսական գոտու ռեզիլենտի կարող են դառնալ ՀՀ-ում գրանցված առևտրային իրավաբանական անձինք, նրանց նաև անհատ ձեռնարկատերներ, ինչպես նաև օտարերկրյա կազմակերպության ներկայացուցչությունները, որոնք ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում բացառապես ազատ տնտեսական գոտում՝ հանապատասխան թույլտվության և պայմանագրի հիման վրա:

Ազատ տնտեսական գոտու ռեզիլենտի թույլտվությունն ստանալու համար անհրաժեշտ է նշտական գործող միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնել՝

- դիմում,
- գործարար ծրագիր,

- կազմակերպչի կողմից տրամադրված տեղեկանք ազատ տնտեսական գոտում գործունեություն իրականացնելու պայմանների վերաբերյալ:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Նախատեսվում է ստեղծել 2 ազատ տնտեսական գոտիներ՝ ռազմավարական նշանակության ապրանքների արտադրության և արտահանման ուղղվածությամբ: Գոտիներից մեկը (որը նախատեսվում է ստեղծել «Զվարթնոց» միջազգային օդանավակայայնի հարակից տարածքում) ունենալու է մեծամասամբ գյուղատնտեսական ապրանքների ուղղվածությամբ, իսկ մյուսը (նախատեսվում է ստեղծել «Մարս» էլեկտրոնիկայի գործարանում)՝ բարձ և նորարարական տեխնոլոգիաների ուղղվածությամբ:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչություն:

Հեռ.՝ +37410 597 127

Էլ. փոստ՝ investment@mineconomy.am

Աղբյուր՝

<http://www.mineconomy.am>

<http://ada.am> (Armenian Business Guide 2011)

ՀՀ «Զվարթնոց» օդանավակայայնի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման հայեցակարգ, 2008թ.

4. Ազատ առևտորի գոտի

2011թ. հոկտեմբերի ԱՊՀ 8 մասնակից պետությունների (այդ թվում ՀՀ) կառավարությունների ղեկավարները Սանկտ-Պետերբուրգում ստորագրել են «ԱՊՀ մասնակից պետությունների միջև ազատ առևտորի գոտու ստեղծման մասին» պայմանագիր: Պայմանագրով նախատեսվում է, որ մասնակիցները գործի կրնեն առևտորի վարման նոր միջազգային պայմաններ, որոնք առավել կիեշտացնել առևտորի հարաբերությունները նրանց միջև:

Ազատ առևտորի գոտին պայմանագրի մասնակիցների համար ենթադրում է՝

- առևտորաշրջանառություն՝ առանց մաքսատուլքերի,
- միասնական չափանիշներ՝ լիցենզավորման, կողավորման և այլ հարցերում,
- որևէ պետություն չի կարող միակողմանի սահմանափակումներ ստեղծել մեկ այլ մասնակից պետության տնտեսվարող սուբյեկտի համար,
- պայմանագիրը նշակվել է Առևտորի համաշխարհային կազմակերպության սահմանած սկզբունքների հիման վրա, հետևաբար առկա սահմանափակումները տարեցտարի նվազեցվելու են:

Այդ պայմանագրով ՀՀ-ի տնտեսական ռեժիմը բարելավվում է: Նախկինում գործող երկողմանի համաձայնագրերում գոյություն ունեցող սահմանափակումների թիվը շուրջ 600-ով նվազում է:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Պայմանագրի մասնակիցներն են՝ Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ուկրաインացիոնը, Տաջիկստանը, Ուկրաինան: Պայմանագիրը դեռևս չի գործում, այն ուժի մեջ կմտնի մասնակից պետություններում վավերացվելուց հետո:

Ազատ առևտորի գոտին որևէ կապ չունի ազատ տնտեսական գոտու հետ:

Աղբյուր՝

<http://www.gov.am>

<http://cis.minsk.by>

5. «Կարգավորիչ գիլյոտին»

2011թ. նոյեմբերին ՀՀ կառավարության և միջազգային դրույ կազմակերպությունների (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, ԵԱՀԿ, Համաշխարհային բանկ, Ավստրիայի զարգացման գործակալություն) միջև ստորագրվել է մտադրությունների մասին նամակ՝ «Կարգավորիչ գիլյոտինի» միջոցով տնտեսական կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ: Նախատեսվում է նշանակալիորեն բարելավել տնտեսության, մասնավորապես՝ Հայաստանում գործարար միջավայրի կարգավորիչ ոլորտը:

«Կարգավորիչ գիլյոտինը» հնարավորություն կտա թարմացնել Հայաստանում գործարարության կանոնակարգիչ քաղաքականությունը և եականորեն բարելավել գործարար

միջավայրը: Այն կնպաստի բյուրոկրատիայի կրծատմանը, գործարարության ոլորտում առկա խոչընդոտների վերացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ Նախագահի հրամանագրով՝ 2011թ. սեպտեմբերին ստեղծվել է Տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգման և ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդությունը: Խորհրդի գործունեությունն ուղղված է լինելու գործարար միջավայրի և շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացմանը, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավնանը և պարզեցմանը, այս ոլորտներում գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելազորմանը, ինչպես նաև դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ, ծախսատար և ոչ նպատակահարմար մեխանիզմների կրծատման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը:

Աղյուր՝
<http://www.gov.am>

Բ. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՍԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր որ (այդ թվում՝ օտարերկրացին) ունի օրենքով չարգելված ծեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահունը և անբարեխիղ նրակցությունն արգելվում են: Որևէ հանգամանք, այդ թվում՝ քաղաքացիությունը, ազգությունը, չի կարող խոչընդոտ հանդիսանալ ՀՀ-ում նրակցային գործարարությամբ զբաղվելու համար:

Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար

1. «Փոքր և միջին ծեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով չի սահմանվում որևէ սահմանափակում օտարերկրացիների համար: Նրանք, ինչպես նաև ՀՀ երկրադարձացիները, ՀՀ քաղաքացիների հետ հավասար, կարող են զբաղվել փոքր և միջին ծեռնարկատիրությամբ:

Օրենքով նախատեսվում է ՀՀ-ում փոքր և միջին ծեռնարկատիրության սուբյեկտների երեք տեսակ՝

- գերփոքր (կազմակերպություններ և անհատ ծեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին քանակը կազմում է մինչև 10 մարդ),
- փոքր (կազմակերպություններ և անհատ ծեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին քանակը կազմում է մինչև 50 մարդ),
- միջին (կազմակերպություններ և անհատ ծեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին քանակը կազմում է մինչև 250 մարդ):

Պետական աջակցության հիմնական ուղղություններից են՝

- իրավական քարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստում ու վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված հանակարգերի ստեղծումը, և այլն:

2. «Անհատ ծեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքով օտարերկրացին ունի նույն հնարավորությունը, ինչ ՀՀ քաղաքացին կամ երկրադարձացին և ՀՀ-ում օրինական բնակվելու ժամանակահատվածում կարող է զբաղվել գործարարությամբ՝ որպես անհատ ծեռնարկատեր:

Անհատ ծեռնարկատերը ՀՀ-ում իրավունք ունի՝

- իրմանադրել առևտորային կազմակերպություն կամ դաշնային նորա մասնակիցը,
- ունենալ առևտորային ներկայացուցչություններ,
- ունենալ վարձու աշխատողներ, այլ իրավունքներ:

3. «Կազմակերպությունների և անհատ ծեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի

0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով սահմանվում է այն տեսակի ապրանքները, որոնցից ավելացված արժեքի հարկը չի հաշվառվում և չի գանձվում կազմակերպությունների կամ անհատ ծեռնարկատերերի կողմից ՀՀ տարածք ներմուծելիս:

Նշված օրենքի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից ավելացված արժեքի հարկով չգանձվող ապրանքներից են՝

- տոհմային կենդանի թռչունները, ծիերը, այծերը, կենդանի ծկները,
- գարու, եգիպտացորենի սերմացու,
- դեղաբույսեր և բույսեր,
- ծխախոտի հումք, ծխախոտի թափոններ,
- չմշակված այումին, այումինի թափոններ և ջարդոն
- ավիավառելիք, ավիացիոն բենզին կամ յուղ, և այլն:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Օտարերկրացու համար ՀՀ-ում գործարարությամբ գրաղվելը կարող է հիմք հանդիսանալ նրան ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու համար (տես՝ Բաժին 7):

Գ. ԿԱՆԱԽ ՏՐՎՈՂ ԴԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է ազատ տնտեսական գոտին:

«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազատ տնտեսական գոտին ՀՀ կառավարության կողմից սահմանված հատուկ տարածք է, որը գտնվում է ՀՀ մաքսային տարածքից դուրս և որտեղ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան:

2. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցումը և անհատ ձեռնարկատիրերի պետական հաշվառումն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը: Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար անհրաժեշտ է գործակալություն ներկայացնել դիմում, անձնագրի պատճեն (օտարերկրացիներն անձնագրի պատճենը ներկայացնում են վավերացված և թարգմանված), սոցիալական քարտի պատճեն, 3x4 չափսի գունավոր լուսանկար և պետական տուրքի վճարման կտրոնը (գումարը՝ 3000 ՀՀԴ):

3. Որքա՞ն ժամանակում է հնարավոր գրանցել ընկերությունը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

Իրավաբանական անձը համարվում է գրանցված գրանցմատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: Լրիվ և ամբողջական փաստաթղթերի առկայության դեպքում պետական ռեգիստրի գործակալության աշխատակիցը տեղում գրառում է կատարում իրավաբանական անձին գրանցելու վերաբերյալ: Ներկայումս ՀՀ-ում գործում է նաև բիզնեսի գրանցման առցանց (on-line) ռեժիմ: Յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ օտարերկրացին, կարող է <https://www.e-register.am> վեր կայքի միջոցով գրանցել իր ընկերությունը էլեկտրոնային ռեգիստրում՝ հաշված րոպեների ընթացքում: Պահանջվող փաստաթղթերը ճիշտ և սահմանված կարգով ներկայացնելուց հետո ընկերությունը համարվում է գրանցված:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

օտարերկրացի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող անձ, որն ունի այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացի) կամ չունի որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձ).

ազգությամբ հայ օտարերկրացի՝ օտարերկրացի, որի հայկական ծագումը հաստատվում է կրոնական և համայնքային կառույցների, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրվող փաստաթղթերի հիման վրա.

այլ պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնած կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի.

միզրանտ աշխատող՝ անձ, որը պետք է ներգրավվի, ներգրավված է կամ ներգրավվել է վարձատրվող գործունեության մեջ մեկ այլ Պետությունում, որի քաղաքացին նա չի հանդիսանում. (Միզրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին ՍԱԿ-ի կոնվենցիան, 1990)

այլ պետությունում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթ՝ քաղաքացու անձնագիրը, այլ պետությունում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական ծառայության «Վերցված է հյուպատոսական հաշվառման մշտական բնակության համար» դրոշմով և (կամ) օտարերկրյա պետության պետական լիազոր մարմնի կողմից տրված մշտական բնակության փաստը հավաստող տեղեկանք, որի իսկության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրվել է համապատասխան եզրակացություն

մշտական բնակության վայր՝ վայր, որտեղ անձը բնակվում է մշտապես կամ առավելապես

մուտքի վիզա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործելու Հայաստանի Հանրապետություն, տարանցիկ երթևեկելու Հայաստանի Հանրապետության տարածքով, գտնվելու Հայաստանի Հանրապետությունում և դուրս գալու Հայաստանի Հանրապետությունից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով և ժամկետներում

ժամանակավոր կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում որոշակի ժամկետով

մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում

հատուկ կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում

օտարերկրյա ներդրող՝ օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը հանապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում

օտարերկրյա ներդրում՝ գույքի ցանկացած տեսակ, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով

օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված ցանկացած կազմակերպական-իրավական տեսակի ձեռնարկություն, որի հիմնադիրը կամ մասնակիցն օտարերկրյա ներդրող է

հանրակրթություն՝ անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով

նախադպրոցական կրթություն՝ տարրական ընդհանուր կրթությանը նախապատրաստող, նախադպրոցական կրթական ծրագրով իրականացվող կրթություն

տարրական կրթություն՝ պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը

հիմնական կրթություն՝ պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները

միջնակարգ կրթություն՝ հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները

նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ վարպետային ուսուցման

միջին մասնագիտական կրթություն՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում

բարձրագույն մասնագիտական կրթություն՝ առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն

հետքուհական մասնագիտական կրթություն՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն

ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ՝ բացառապես ազատ տնտեսական գոտու կազմակերպման նպատակով կառավարության ստեղծած (հիմնադրած) կամ կառավարության որոշմամբ ընտրված իրավաբանական անձ, որն ապահովում է ազատ տնտեսական գոտուն գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը և ծառայությունների նաևուցումը

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Տոներ և հիշատակի օրեր
(ըստ «Հայաստանի Հանրապետության տոների ու հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի)

Դեկտեմբերի 31 –	Ամանոր (ոչ աշխատանքային օրեր)
Հունվարի 3 – 5	Սահմանադրյան տոներ (ոչ աշխատանքային օրեր)
Հունվարի 6	Սուրբ Ծննդյան և Հայտնություն (ոչ աշխատանքային օր)
Հունվարի 7	Մեռելոց հիշատակի օր (ոչ աշխատանքային օր)
Հունվարի 28	Բանակի օր (ոչ աշխատանքային օր)
Փետրվարի 21	Մայրենի լեզվի օր
Փետրվարի 28	Աղրթածանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի և բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր
Մարտի 8	Կանանց տոն (ոչ աշխատանքային օր)
Ապրիլի 7	Մայրության ու գեղեցկության օր
Ապրիլի 24	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր (ոչ աշխատանքային օր)
Մայիսի 1	Աշխատանքի օր (ոչ աշխատանքային օր)
Մայիսի 8	Երկրապահի օր
Մայիսի 9	Հաղթանակի և խաղաղության տոն (ոչ աշխատանքային օր)
Մայիսի 15	Ընտանիքի օր
Մայիսի 28	Հանրապետության տոն (ոչ աշխատանքային օր)
Հունիսի 1	Երեխաների իրավունքների պաշտպանության օր
Հունիսի 14	Բռնադատվածների հիշատակի օր
Հուլիսի 5	Սահմանադրության օր (ոչ աշխատանքային օր)
Սեպտեմբերի 1	Գիտելիքի և դպրության օր
Սեպտեմբերի 21	Անկախության տոն (ոչ աշխատանքային օր)
Հոկտեմբերի 5	Ուսուցչի օր
Հոկտեմբերի 2-րդ շաբաթ օրը	Թարգմանչաց տոն
Նոյեմբերի 10	Ցեղական ինքնակառավարման օր
Դեկտեմբերի 7	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր
Սուրբ Զատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը	Սուրբ Վարդանաց տոն՝ բարի գործի և ազգային տուրքի օր
Սուրբ Զատիկից 64 օր հետո՝ կիրակի օրը	Սուրբ Էջմիածնի տոն

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ

ԴԵՍՊԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալբանիայի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Գագիկ Ղալաջյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Աթենք, Հունաստան

Հասցե՝ 95, Konstantinou Paleologou Avenue, Kalandri 15232, Athens, Greece

Հեռ.՝ (30-210) 6831130

Ֆաքս՝ (30-210) 6831183

Էլ. փոստ՝ embassy.athens@mfa.am

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ն.Գ. պրն. Թաթուլ Մարգարյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Վաշինգտոն, ԱՄՆ

Հասցե՝ 2225 R Str., N. W., Washington DC, 20008 USA

Հեռ.՝ (1-202) 319-1976, Ֆաքս՝ (1-202) 319-2982

Էլ. փոստ՝ armusaembassy@mfa.am

Կայք՝ <http://www.armeniaemb.org>

Անդորրայի Իշխանություն

Ն.Գ. պրն. Վիգեն Չիտեշյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Փարիզ, Ֆրանսիա

Հասցե՝ 9, Rue Viete, 75017 Paris, France

Հեռ.՝ (33-1) 42129800, (33-1) 42129802

Ֆաքս՝ (33-1) 42129803

Էլ. փոստ՝ ambarmen@wanadoo.fr

Ավստրիայի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Արման Կիրակոսյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Վիեննա, Ավստրիա

Հասցե՝ 28, Hadikgasse, A -1140 Vienna, Austria

Հեռ.՝ (43-1) 522-7479

Ֆաքս՝ (43-1) 522-7479 -150

Էլ. փոստ՝ armenia@armembassy.at

Արաբական Միացյալ Էմիրություններ

Ն.Գ. պրն. Վահագն Սելիբրյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Աբու Դաբի, ԱՍՏ

Հասցե՝ Embassies District (al-Safarat), 24 Al Karamah Str., Zone 2, P. O. Box Number: 6358,

Հեռ.՝ (9712) 4444196, 4444128

Ֆաքս՝ (9712) 4444197

Էլ. փոստ՝ armemiratesembassy@mfa.am

Կայք՝ <http://uae.mfa.am>

Արգենտինայի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Վլադիմիր Կարմիրշահյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Բուենոս Այրես, Արգենտինա

Հասցե՝ J. A. Pachego de Melo 1922 C1126AAD, Ciudad de Buenos Aires, Argentina

Հեռ.՝ (54-11) 4816-8710

Ֆաքս՝ (54-11) 4812-2803

Էլ. փոստ՝ armenia@fibertel.com.ar

Աֆղանստանի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Վասիլի Ղազարյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Աստանա, Ղազախստան

Հասցե՝ 19 Kiz Zhibek Str, Komsomolski Microdistrict Astana, Kazakhstan

Հեռ.՝ 7 (7-172) 402015, 402017

Ֆաքս՝ 7 (7-172) 401970

Էլ. փոստ՝ armkazakhstanembassy@mfa.am

Բահրեյնի Թագավորություն

Ն.Գ. պրն. Վահագն Մելիքյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Աբու Դաբի, ԱՄԷ

Հասցե՝ Embassies District (al-Safarat), 24 Al Karamah Str., Zone 2, P. O. Box Number: 6358,

Հեռ.՝ (9712) 4444196, 4444128

Ֆաքս՝ (9712) 4444197

Էլ. փոստ՝ armemiratesembassy@mfa.am

Բելառուսի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Արմեն Խաչատրյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Մինսկ, Բելառուս

Հասցե՝ Բելառուս, Մինսկ 220050, Կիրովի փող. 17

Հեռ.՝ (375-17) 227-51-53, 227-05-63

Ֆաքս՝ (375-17) 227-51-53

Էլ. փոստ՝ armbelarusembassy@mfa.am

Բելգիայի Թագավորություն

Ն.Գ. պրն. Ավետ Սղոնց

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Բրյուսել, Բելգիա

Հասցե՝ 28, Rue Montoyer, 1000 Brussels, Belgium

Հեռ.՝ (32-2) 348-44-00

Ֆաքս՝ (32-2) 348-44-01

Էլ. փոստ՝ armbelgiumembassy@mfa.am

Բրազիլիայի Ռաշնային Հանրապետություն

Ն.Գ. պրն. Աշոտ Եղիազարյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Բրազիլիա, Բրազիլիա

Հասցե՝ SHIS QL 28, Conjunto 3, Casa 4, CEP: 71665-235

Էլ. փոստ՝ armgenconsulatesan-paulo@mfa.am

Բուլղարիայի Հանրապետություն

Ն.Գ. պրն. Արսեն Սինյան

Արտակարգ և լիազոր դեսպան

Նստավայր՝ Սոֆիա, Բուլղարիա

Հասցե՝ 3, Zagorichane Str., 1111 Sofia, Bulgaria

Հեռ.՝ (359-2) 9461272, 9461273

Ֆաքս՝ (359-2) 9461274

